ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ
ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՈՒՅՍԻ ՇՈՂԵՐ

2014

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ

Հայրս և մայրս՝ Հովհաննես և Անժել
Հակոբյանները նշանված ժամանակ Բեյրութում

«ԼՈՒՅՍԻ ՇՈՂԵՐ»

ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Գրքի կողքի ձևավորումը՝ Մաշտոց Ջոբանյանի

Copyright @ 2014
By Archpriest Fr. Hovsep Hagopian

All rights are reserved.
First edition – 2014
Printed in Armenia-Holy Etchmiadzin
For information and address condact
Archpriest Fr. Hovsep Hagopian
1620 N. San Fernando Blvd. # 15
Burbank, CA 91504, USA
e-mail: frhovsepfaith@hotmail.com
www.frhovsep.com

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ.

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հրամանաւ Տեառն Յովնանու Արքեպիսկոպոսի

Առաջնորդին Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի

Արեւմտեան Թեմի

ՍՈՒՅՆ ՔԱՐՈԶԱԳՐՔԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐՆ ԵՆ՝

ԼԵՎՈՆ ԵՎ ՇՈՂԻԿ ԴԱՎԹՅԱՆՆԵՐԸ

ԷԴԻԿ ԵՎ ԱԼԻՆԱ ԴԱՎԹՅԱՆՆԵՐԸ

ՔԱՐՈԼԻՆ ԴԱՎԹՅԱՆԸ

ԱՍՏԾՈՒ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՂ ԼԻՆԻ ՆՐԱՆՑ

ԲՈԼՈՐԻ ՎՐԱ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Իմ հայրենի ժողովրդի ընթերցանությանն եմ հանձնում «Լույսի Շողեր», կարճ քարոզներս: Այս քարոզներում հավատացյալը կգտնի նաև փոքրիկ պատմություններ, որոնք կարող են մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի զորությունից մի շող կաթեցնել իր հոգու ու սրտի մեջ:

Աղոթող եմ Ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ն·Ս·Օ·Տ·Տ· Գարեգին Բ· Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաջառողջության և իր եկեղեցանվեր ու հայրենաշեն գործոց հաջողության համար:

Արևելահայերենի ուղղագրության և մտքի դասավորման, ինչպես նաև գրքի կազմը պատրաստելու աշխատանքի մեջ, իրենց կարևոր լուման ունեն Առաջնորդարանի աշխատակիցներ՝ ինձ շատ սիրելի Հայկ Մադոյանն ու Մաշտոց Ջոբանյանը, որոնց հայտնում եմ իմ սերն ու շնորհակալությունը:

«Լույսի Շողեր» կարճ քարոզներիս լույս ընծայման նպատակն է, ինչ որ չափով հագեցնել մեր ժողովրդի հոգու ծարավը: Եթե մի կաթիլ իսկ հաջողվեմ իմ այս առաքելության մեջ, դա կլինի իմ վարձը: Աղոթեցեք ինձ համար:

Սիրով՝

Հովսեփ Ավագ Քհն· Հակոբյան

Օգոստոս, 2014
Բրբենկ, Կալիֆորնիա, ԱՄՆ

ՀՈՂԻ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՈՏԸ

Հայը հողի ժողովուրդ է կամ գոնե եղել է այդպիսին, ու հիմա էլ նույնն է: Նա եղբայրացել է հողին ու բնության հետ նույնացել… Ինչպիսի՞ն է հայ մարդը - ազատասեր, ուղղամիտ, խիզախ, անմիջական, կարեկից, հյուրասեր: Նա օժտված է հոգու հմտությամբ, սրտի քնքշությամբ ու քրտնաջան աշխատելու կարողությամբ: Աշխարհի բոլոր փառքերից ու գանձերից ավելի հայ մարդը գերադասել է հարազատ հողը:

Այստեղ՝ հեռավոր Ամերիկայում, մենք լավ ենք զգում Հայրենիքի ու հողի կարոտը: Դա մի ուրիշ, անբացատրելի զգացում է, որը խոսքերով չես կարող արտահայտել: Այն գալիս է սրտի խորքերից և կարող է զգալ հենց ինքը՝ կարոտն ապրողը: Մի թողեք մեր հողն ու Հայրենիքը: Հետո կզղջաք, բայց արդեն ուշ կլինի:

Այս պատմությունը գեղեցիկ մի ավանդապատում է և իր մեջ մեծ խորհուրդ ունի:

ԱԲԳԱՐ ԹԱԳԱՎՈՐԻ ՀՆԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Իր իմաստությամբ հռչակված Եդեսիայի Աբգար թագավորը երկար ժամանակով հյուրընկալվում է Հռոմի Օգոստոս կայսեր մոտ: Կայսրը հավանելով նրա ընկերակցությունը, ոչ մի ձևով չի համաձայնվում թույլատրել սիրելի բարեկամին վերադառնալ իր Հայրենիքը: Աբգարը, որ նաև վարժ որսորդ էր, դիմում է հնարամտության: Նա որսի գնալով բռնում է տեսակ-տեսակ կենդանիների, ապա յուրաքանչյուր որսի բնակված վայրերից տարբեր պարկերի մեջ հող հավաքելով՝ վերադառնում է Հռոմ: Կայսրին ներկայանալով թագավորը պատմում է, թե որ կենդանին

որ հողի վրա է բռնել և հրամայում է փռել հողը հրապարակի վրա իրարից անջատ և բաց թողնել կենդանիներին: Իմաստուն թագավորը բացատրում է կայսրին, թե յուրաքանչյուր կենդանի իր հարազատ հողի կողմը պիտի վազի:

Ի զարմանս Օգոստոս կայսեր, կենդանիները այդպես էլ վարվում են: Աբգարը քաջալերվելով դիմում է կայսրին, ասելով.

«Տեր իմ, տեսնո՞ւմ ես մինչև իսկ կենդանիներն ունեն հայրենիքի զգացողություն, որովհետև Աստված նրանց հարազատ հողը սիրելու բնազդով է օժտել: Ես մարդ եմ և կենդանիներից ավելի կարոտում եմ իմ հայրենի հողը, փոքր թագավորությունս և ընտանիքս»:

Կայսրը չափազանց հուզվելով համաձայնվում է պատվով վերադարձնել Աբգար թագավորին իր Հայրենիքը:

ԱՂՔԱՏՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ՔԱՀԱՆԱՆ

«ԱՇԽԱՐՀՈՒՄ ՆԵՂՈՒԹՅՈՒՆ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՔ, ՍԱԿԱՅՆ ՔԱՋԱԼԵՐՎԵՑԵՔ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԵՍ ՀԱՂԹԵՑԻ ԱՇԽԱՐՀԻՆ» (ՀՈՎՀ. 16:33)

Տիրոջը նվիրված կյանքը լի է փորձություններով, ցավերով, վշտերով ու տառապանքներով: Իսկ մեղքի համար ստացած արդարագույն պատիժն այն է, որ մարդ կորցնում է այն, ինչը չի ցանկացել լավ օգտագործել: Եթե ասենք առողջությունը ճիշտ չի օգտագործվել, այն խաթարվում է, կորչում: Նույնպես նաև Տիրոջ կողմից տրվող մյուս պարգևները:

Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու Հայրերից Երանելի Օգոստինոս Հայրապետն ասում է.

«Քննությունը ցույց է տալիս, որ մարդն ինչպիսի մեղք էլ որ գործի, այն առաջին հերթին ուղղված է ոչ թե Աստծու, այլ սեփական անձի դեմ»:

«Միջին դարում մի ծուխի քահանա նկատելով, որ իր շրջանում աղքատները շատանում են ու նրանց զավակները դժվարությամբ են ապրում, դիմում է երևելի մի մեծահարուստի և օգնություն խնդրում նրանից: Հարուստը ոչ միայն զլանում է իր քսակը բացել, այլ կոպտորեն մերժում է քահանայի խնդրանքը ու անպատվում աղքատներին: Աստծու ծառան անտեսելով նրա կոպտություններն ու վիրավորանքը, ամեն անգամ համառորեն աղքատների սիրույն խնդրում է, որ հարուստը օգնի նրանց:

Եվ երբ մի անգամ քահանան կրկին դիմում է նրան, մեծահարուստը այլևս չհամբերելով, ափերից դուրս է գա-

լիս և ուժգնորեն ապտակում է նրան: Պատկերացրեք, եթե այդպիսի ապտակ ստացողը դուք լինեիք, ի՞նչ կանեիք, կլռեի՞ք, կթողնեիք ու կգնայի՞ք լուռ կուլ տալով վիրավորանքը, թե՝ դուք էլ ապտակով կպատասխանեիք: Գիտեմ, որ հիմա դժվար է ձեր կողմից որևէ պատասխան ստանալը: Ժամանակ է պետք, որ մտածեք: Տեսնենք, թե քահանան ինչպես վարվեց: Ինչպես վայել է Աստծու ծառային, համբերությամբ ու սառնարյուն կերպով, կարծես թե ոչինչ չէր պատահել, դիմում է մեծահարուստին ու հանգիստ ասում.

«Շնորհակալ եմ, ես իմ բաժինը ստացա, հիմա խնդրում եմ մի բան էլ իմ աղքատներին տվեք»:

Կարծես լույս է ծագում մեծահարուստի մտքում, սրտում ու հոգում և նա հուզված ու զղջացած, տալիս է քահանայի խնդրած գումարը և հազար անգամ ներողություն խնդրում իր կոպիտ արարքի համար»:

Յուրաքանչյուր քրիստոնյա պիտի հիշի իր Մեծ Ուսուցչի՝ Հիսուսի խոսքը. *«Երանի նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. 5:10):*

Երկրի վրա երջանկություն մի' փնտրիր; Երկիրը դրախտ չէ: Ադամի մեղքից և արտաքսումից հետո երկրի վրա դրախտ չկա: Եվ աշխարհում ամեն ոք իր խաչն ունի:

Սբ· Գրիգոր Վարդապետ Տաթևացին ասում է. *«Մի նախանձիր ուրիշին, համարելով, թե նրա խաչն ավելի թեթև է: Խաչի ծանրությունն ու կշիռը ոչ ոք չի կարող իմանալ բացի նրանից, ով, այն կրում է: Անկասկած է միայն, որ դու ինչպիսի խաչ էլ, որ ընտրելու լինես քեզ*

համար, ոչ մեկը քեզ հարմար չի լինի, բացի քո խաչից: … Տերն ավելի լավ գիտի, թե մեզնից ամեն մեկին ի՞նչ է պետք, ինչպիսի ծանրություն դնի յուրաքանչյուրիս ուսերին, ինչ-պիսի պայքար, ինչպիսի փորձություններ տա մեզ…»:

ԱՄՈՒՐ ՀԱՎԱՏԸ

«Եվ Առաքյալները Տիրոջն ասացին. «Ավելացրո՛ւ մեր հավատը»: Եվ Տերն ասաց. «Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, և այս թթենուն ասեք՝ «Արմատախիլ եղիր և տնկվի՛ր ծովի մեջ», նա իսկ կհնազանդվի ձեզ (Ղուկ. 17:5):

Առաքյալները Հիսուսի Համբարձումից և Վերնատան մեջ Սուրբ Հոգու շնորհները ստանալուց հետո, իրենց քարոզչությունների ընթացքում ենթարկվեցին ամեն ձևի զրկանքների և չարչարանքների, բայց ոչ մի րոպե չթուլացան ու չհեռացան իրենց հավատից: Նրանք ցույց տվեցին, որ իրենց հավատը հաստատված է անխորտակելի մի ժայռի վրա, որին դիպչելով փշրվեցին աշխարհի բոլոր տեսակի փոթորիկները:

Այս պատմությունը մի սրբի նահատակության մասին է.

Սբ· Իգնատիոս Անտիոքացի Հայրապետը ձերբակալված էր և դատապարտված կրկեսում առյուծների առջև նետվելու՝ իր քրիստոնյա լինելու համար: Վերջին երեկոյան, նրա բարեկամներից շատերը հնարավորություն են ստեղծում, որպեսզի նրան բանտից փախցնեն, բայց Հայրապետը մերժում է, ասելով.

«Ես չպիտի վախենամ ու բանտից փախչեմ: Աստված այնպես է տնօրինել, որ վաղը ես գազանների համար կեր դառնամ: Ես նմանվում եմ այն ցորենին, որ ջրաղացի քարերի միջև փշրվում է, որպեսզի հաց դառնա և ուրիշներին սնունդ լինի: Վաղը ես էլ պետք է գազանների բերանում փշրվեմ, որ հավատի հաց դառնամ և բաժանվեմ մարդկանց, որպեսզի նրանց հավատը ուժեղանա»:

Սրանք նահատակվող Հայրապետի վերջին խոսքերն էին:

Իրապես էլ, հաջորդ օրը, երբ գազանները կրկեսում հարձակվում են նրա վրա և բզկտում, ժողովուրդը տեսնում է նրա քաջությունն ու վեհ կեցվածքը: Ասում են, թե այդ պահին Հայրապետը ծնկի եկած աղոթելիս է եղել: Շատ անաստվածներ ազդվել են այս տեսարանից ու իրենք էլ քրիստոնյա մկրտվել:

21-րդ դարում ենք ապրում և մեր շուրջը կան բազում հրապուրիչ ուժեր՝ դրամ, վայելք, հանգիստ կյանքի պայմաններ: Ապրում ենք մի աշխարհում, ուր մարդիկ և պետություններ դժբախտաբար իրար են բզկտում, ինչպես գազանները արեցին Սուրբ Հայրապետին, ուր գիտությունն առաջ է ընթանում սրընթաց կերպով և ուր մարդիկ ծուռ աչքով են նայում մեկը մյուսին: Կործանվում են թագավորություններ, ծնվում նոր պետություններ և այս արևի տակ ամեն օր, ամեն ժամ ու ամեն րոպե մի բան փոխվում է, նույնիսկ մարդը, որն Աստծու կատարյալ ստեղծագործությունն է, նա էլ է փոխվում:

Միակ բանը, որը մնում է հաստատ, անխախտ ու անփոփոխ՝ մեր քրիստոնեական հավատն է:

ԱՆՄԻՏ ՀԱՐՈՒՍՏԸ

Հարուստը ինքն իրենից գոհ ասում է. *«…Ով մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր և ուրա՛խ եղիր» (Ղուկ. 12:19): Աստված տեսնելով նրա ագահությունը, ասում է. «Անմի՛տ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու: Նույնպես է նաև նա, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա» (Ղուկ. 12:20-21):*

Այս պատմությունը դրա վառ վկայությունն է:

ԱԴԱՄԱՆԴՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՎԱԾ ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏԸ

Չինացի մի իմաստասեր կանգ է առնում ադամանդներով իր կուրծքը զարդարած մի մեծահարուստի առաջ և դրանք հիացմունքով դիտելուց հետո շնորհակալություն հայտնում նրան;

Մեծահարուստ նախ զարմանում է նրա շնորհակալության վրա, ապա հարցնում պատճառը:

Իմաստունը ասում է պատճառը: Բնական է, որ դրանք ադամանդակուռ զարդեր էին:

«Բայց դրանք իմն են, ձեզ չեմ տվել, որ շնորհակալություն եք հայտնում»,- ասում է զարմացած մեծահարուստը»:

«Ես էլ ճիշտ այդ պատճառով է, որ շնորհակալություն եմ հայտնում, որովհետև դուք այդ մեծ ծանրությունը ձեր վրա կրելով, հնարավորություն ստեղծեցիք ինձ հաճույքն ու ուրախությունը ունենալու դրանք դիտելու և զմայլվելու: Դուք դրանք կրում եք ձեր վրա, սակայն վստահ

եմ, որ վախենում եք նաև դրանց կորցնելուց»,- ասում է Չինացի իմաստասերը:

Մեր կյանքի նպատակը ոչ թե ադամանդներով զարդարվելն է, ո՛չ թե հողի ընդարձակ տարածություններ ունենալը, ո՛չ թե բարձրաբերձ շենքերի տեր լինելը, ո՛չ թե հսկա հարստություն կուտակելը և ո՛չ էլ լսել փառասիրությունը փայփայող փառավորման խոսքեր, այլ խոնարհվել Ամենազոր Աստծու առաջ, որովհետև Նա է ամենահարուստը:

ԼՈՒՅՍԻ ՈՒԺԸ

Լույսի ու խավարի մասին Աստվածաշունչը Ծննդոց գրքի 1-ին գլխի 4-րդ համարում այսպես է ասում. *«Աստված տեսավ, որ լույսը լավ է, Աստված լույսը բաժանեց խավարից» (Ծննդոց 1:4):* Ինչպես տեսնում եք, հենց աշխարհի սկզբից Աստված լույսը խավարից բաժանեց, քանի որ լույսը բարի էր:

Հիսուս երկու հազար տարի առաջ հայտարարեց. *«Ես եմ աշխարհի լույսը, ով որ իմ հետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Հովհ.8:12):*

Հիսուս եկավ ու աշխարհի վրա հաստատեց Իր Լույսի ու Սիրո Թագավորությունը:

Այս հեքիաթը կարծում եմ հետաքրքիր է:

Ամենապիտանի բանը - Ավետիք Իսահակյան

Ժամանակով արևելքի մի հրաշագեղ աշխարհում արդարամիտ ու խելացի մի թագավոր է եղել: Նա ունեցել է երեք որդի: Եղավ, որ թագավորը ծերացավ և կառավարության ղեկը կամեցավ դեռ կենդանի ժամանակ հանձնել իր ժառանգներից նրան, ով ավելի ընդունակ կլինի այդ դժվարին գործը կատարել:

Ուստի մի օր կանչեց որդիներին և ասաց.

«Սիրելի որդիներ, տեսնում եք, որ ձեր հայրը ծերացել է ու էլ չի կարող երկիրը կառավարել: Ես վաղուց իջած կլինեի իմ գահից, եթե կատարված տեսնեի այն ցանկությունս, որ երկար տարիներ պաշարել է հոգիս: Եվ հիմա ձեզանից ով կարողանա իմաստուն կերպով իրա-

կանացնել այդ ցանկությունս, նա կստանա իմ թագը և կկառավարի իմ ժողովրդին»:

Որդիները համաձայնվում են և ուզում են իմանալ, թե ի՞նչ է իրենց հոր ցանկությունը:

Հայրը ցույց է տալիս մի մեծ շտեմարան և հանձնարարում նրանց լցնել այնտեղ աշխարհի ամենապիտանի բանով, որով կարելի լիներ երջանիկ դարձնել իր ժողովրդին:

Որդիները համբուրում են հոր ձեռքը ու ճանապարհ ընկնում:

Աշխարհից աշխարհ, երկրից երկիր ման գալուց և թափառելուց, հետո, նրանք վերադառնում են տուն ու հայտնում, որ ամեն մեկը գտել է աշխարհի ամենապիտանի բանը: Շտեմարանի մուտքին կանգնում են թագավորը, որդիները, պալատականները և ամբողջ ժողովուրդը ու անհամբերությամբ սպասում, թե նրանք ի՞նչ են բերել:

Որդիներից մեկը գրպանից հանում է մի բուռ հացահատիկ և լցնելով շտեմարանի մեջ, ասում, որ հացով կլցնի այն, որից անհրաժեշտ այլ բան չգտավ:

Միջնեկ որդին գրպանից հանում է մի բուռ հող և լցնելով շտեմարանի մեջ, ասում է, որ հողով կլցնի այն, քանի որ դրանից ավելի անհրաժեշտ այլ բան չգտավ:

Կրտսեր որդին հոր հարցմանը պատասխանում է, թե ԼՈՒՅՍՈՎ ԿԼՑՆԻ ԱՅՆ: Իր խոսքերն են. «Աշխարհ ման եկա, լույսից անհրաժեշտ ոչինչ չգտա: Լույսն է ամենապիտանի բանն աշխարհում: Առանց լույսի հողը հաց չի լինի, առանց լույսի հողի վրա կյանք չի լինի: Շատ թա-

փառեցի, շատ աշխարհներ տեսա և գտա, որ գիտության լույսն է ամենապիտանի բանը, և միայն գիտության լույսով կարելի է կառավարել աշխարհը»:

«Ապրե՛ս,- գոչեց ուրախացած հայրը,- Քեզ է արժանի իմ գահը, քանի որ լույսով ու գիտությամբ պիտի լցնես Թագավորությունդ»:

Բոլորը ուրախացած ողջունեցին նոր, երիտասարդ, երկիրը լույսով լցնող Թագավորին;

Այն մարդիկ, որոնց գործերն ու ցանկությունները հակառակ են Աստծու կամքին, չեն կարող դիմանալ Հիսուսի խոսքերից ճառագայթող ճշմարիտ լույսին ու դրա համար էլ մերժում են լույսը և նախընտրում՝ խավարը:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ

Ամեն մարդ կյանքում ձգտում է ունենալ երեք կարևոր արժեքներ՝ ճշմարտություն, բարություն և գեղեցկություն:

Ճշմարտությունը իբրև մարդու խոսքի ու գործի միջև ճշտություն, կոչվում է ճշմարտախոսություն, անկեղծություն կամ ուղղամտություն: Արդարև Սուրբ Գիրքը վկայում է, թե Աստված ակունքն է ամեն ճշմարտության:

Ամեն մարդ, ուր որ էլ ապրի, ինչ պայմաններում էլ, որ լինի, պարտավոր է իր կյանքի օրինակով ու խոսքի վկայությամբ ցույց տալ ճշմարտությունը, պարկեշտությունն ու անկեղծությունը:

Բարոյական գեղեցկությունը և բարիքի գործադրությունը ընկերակցում են ճշմարտությանը: Այս պատճառով Աստծու պատկերով ստեղծված մարդը Նրա հետ ճշմարտության կապը արտահայտում է նաև իր գեղարվեստական գեղեցկությամբ: Այս ուղղությամբ արվեստը ճշմարիտ է և գեղեցիկ, երբ իր ծնունդով համապատասխանում է հատուկ կոչման, որ է՝ հավատով ու երկրպագությամբ հիշել և փառավորել Աստծու գերակա խորհուրդը: Այն գեղեցկությունն է վսեմ, անտեսանելի ճշմարտության, սերն ու պայծառությունը Աստծու փառքի: Արվեստը ձգտում է Աստծու անհուն գեղեցկության և օժանդակելու մարդկային հոգիների դարձը դեպի Աստված:

Ուրեմն ճշմարտությունը, բարությունն ու գեղեցկությունը իրար հետ կապված են և կախում ունեն իրարից:

Այս պատմությունը արվեստի ուժի մասին է, որն անշուշտ կապված է Աստծու զորության հետ: Բանաստեղծը առանց Աստծու ներշնչման, չի կարող գլուխգործոցներ ստեղծել: Նրա ներշնչման աղբյուրը՝ Աստված է: Առանց Աստծու, բանաստեղծի միտքը չի կարող լուսավորվել: Նույնիսկ բռնակալները Աստծու զորության առաջ ծնկի են գալիս, այս պարագայում բանաստեղծ Հաֆիզի միջոցով: Կարդացե՛ք այս պատմությունը և կզգա՛ք, թե Աստված ինչքան ուժեղ է:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՎԱՐԴԵՐԸ

Այս պատմությունը Պարսկաստանի հայտնի բանաստեղծներից մեկի՝ Հաֆիզի մասին է:

Հաֆիզը հրաշալի վարդերի պարտեզ ուներ և ամեն օր մի աղջիկ մի փունջ վարդ էր գողանում՝ վաճառում և այդ գումարով խնամում էր մի հիվանդ կնոջ: Հաֆիզը սկզբում զայրանում է, սակայն, երբ հասկանում է աղջկա բարի գործը, գնահատում է նրան ու որդեգրում, քանի որ աղջիկը որբ էր:

Որոշ ժամանակ հետո լուր է տարածվում, թե Լենկթեմուրը արշավում է Պարսկաստանի վրա: Նա ավերելով գալիս ու շրջապատում է Շիրազ քաղաքը: Պարզվում է, որ այդ արյունարբուն ծանոթ լինելով Հաֆիզի բանաստեղծություններին, սիրում էր դրանք: Լենկթեմուրը ոչ մի խնդրանք հաշվի չառնելով պատրաստվում էր հրաման տալու, որ երկրի երեսից ջնջեն Շիրազ քաղաքը: Շիրազի անվանի քաղաքացիները, խնդրում էին խնայել քաղաքը, հարկ վերցնել: Այնտեղ էր նաև բանաստեղծ Հաֆիզը: Սակայն Լենկթեմուրը անդրդվելի է մնում: Ահա այդ ժամանակ աղջիկը ծերունի Հաֆիզին խնդրում է իրեն թույլ տա

դիմելու նրան: Ծերունին ու աղջիկը մոտենում են բռնակալին·

«Ո՞վ է այդ ծերունին»,- հարցնում է Լենկթեմուրը:

«Բանաստեղծ Հաֆիզն է»,- պատասխանում է աղջիկը:

Լենկթեմուրի դեմքը մեղմանում է: Նրա աչքերն այնպես սպառնալից չէին: Տիրում է մի բոպեաչափ լռություն: Վերջապես բռնակալն ասում է,

«Հաֆիզ, ես վաղուց էի ուզում քեզ տեսնել: Ամբողջ աշխարհում ես և դու ենք մեծ· դու քո բանաստեղծություններով, ես իմ հաղթություններով: Մի բան կարդա ինձ համար»:

Այլայլված բանաստեղծը չէր իմանում ի՞նչ ընտրեր: Այդ ժամանակ փոքրիկ Դանիան շշնջում է,

«Թո՛ղ վարդը իր թփին»…

Հաֆիզը հասկանում է աղջկա միտքը, ուժ է առնում ու սկսում,

«Թո՛ղ վարդը իր թփին: Եթե քաղվի նա կմեռնի, և դու չես տեսնի նրա գեղեցկությունը և հոտը չես առնի: Թո՛ղ վարդը իր թփին: Մի՞թե դու չես կարող չքաղած հիանալ նրանով: Թո՛ղ վարդը իր թփին: Եթե չքաղես քեզ համար կասեն՝ դու իմաստուն ես, դու ողորմած ես: Բայց եթե քաղես՝ կասեն, որ քո ձեռքերը վայրագ են և քո սիրտը անողորմ: Թո՛ղ վարդը իր թփին»:

Բանաստեղծը լռում է:

«Քո բանաստեղծությունը ինձ դուր է գալիս, Հաֆիզ,- ասում է Լենկթեմուրը, բայց քո խորհուրդը ինձ համար չէ: Ես նրանցից չեմ, որոնք բավականության համար են վարդ քաղում»:

Հաֆիզը բարձրացնում է ձեռքը և ցույց տալիս Շիրազը ու ասում,

«Հիշիր, հաղթողդ, որ այս քաղաքը Պարսկաստանի վարդն է»:

Լենկթեմուրը շրթունքները կծում է: Նա սկզբում զրգռված էր երևում, բայց մի քիչ մտածելուց հետո, ձայն է տալիս իր զորքին,

«Մնացե՛ք այստեղ, գիշերեցե՛ք պատերի տակ»:

Զորքը քաղաք չի մտնում:

Լենկթեմուրը միայն ինքն է մտնում քաղաք և այն առնում իր հպատակության տակ:

Շիրազն անվնաս է մնում, շնորհիվ բանաստեղծ Հաֆիզի:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ

Հակոբոս Առաքյալն ասում է. *«Ով որ գիտե, թե ինչ է բարին և չի անում, նրա համար այդ մեղք է» (Ա. Հակոբ. 4:17):*

ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ՔՈ ՍՏՐՈՒԿԸ ԼԻՆԵՄ...

Ամերիկայի ստեղծումից հետո, սկզբնական տարիներին, երբ դեռևս ժողովրդավարության մասին խոսք անգամ լինել չէր կարող, մի սևամորթ ստրուկի տանում են շուկա վաճառելու:

Խեղճը հուզմունքով սպասում է, թե ո՞վ պիտի լինի իր նոր տերը:

Մի հարուստ երիտասարդ, որն ապավինել էր Աստծու ողորմածությանը, մեծ գումար վճարելով գնում է նրան և ազատ արձակելով ասում. *«Միրելիս, քեզ գնեցի մեկ նպատակով, որ այս րոպեից սկսած ազատ լինես և ոչ մեկից կախում չունենաս; Գնա՛ և մի նոր կյանք սկսիր: Եթե պատահի, որ նեղություն ունենաս, արի ինձ մոտ՝ ահա իմ հասցեն»:*

Սևամորթի (որն առաջին անգամ էր այսպիսի բարեսիրտ մի տեր տեսնում) աչքերը լցվում են երախտագիտության արցունքներով, իսկույն ընկնում է իր բարերարի ոտքերն ու լացելով՝ ասում.

«Տեր, ինձ համար նախընտրելի է քո ստրուկը լինել, քան թե քեզանից հեռու ապրել ազատ ու ապերջանիկ»:

Այս է իսկական բարեգործությունը: Բարի գործը գին չունի:

«ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ ԿՅԱՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ Է»

ՎԵՐՑՎԱԾ Է Է ՄԱՆՈՒԵԼ ՔԱՀԱՆԱ ՆԱԶԱՐՅԱՆԻ
«ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ» ԳՐՔԻՑ էջ 143-144, 153-154.

ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եթե երեխային հարկավոր է երկյուղ ազդել, ապա նրան պետք է սովորեցնել միայն Աստծու երկյուղը. *«Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է»,*- ասում է Սողոմոն իմաստունը: *«Ով,- ասում է,- ուզում է իմաստուն լինել, նա ամենից առաջ պետք է ունենա Աստծու երկյուղը»: «Ինչո՞ւ»:* Սարգիս Շնորհալին պատասխանում է. *«Իմաստության մայրը Աստծու երկյուղն է, իսկ որդիները՝ բոլոր առաքինությունները»:* Իսկ մի նշանավոր մարդ ասում է. *«Ես վախենում եմ միայն Աստծուց, մեկ էլ այն մարդուց, որ չի վախենում Նրանից»:* Եվ Աստծու երկյուղ ասելով պետք է հասկանալ աստվածսիրություն, որովհետև ով որ սիրում է Աստծուն, վախենում է Նրանից: Աստվածավախ մարդու վրա է Աստծու աչքը՝ որպեսզի հսկի և ուղղված է Նրա ականջը՝ որպեսզի խնդրածը լսի: *«Ուր որ Տիրոջ երկյուղն է,- ասում է Սբ. Բարսեղ Հայրապետը,- այնտեղ պատվիրանների պահպանությունն է, և ուր պատվիրանների պահպանությունն է, այնտեղ ոչ մի հանցանք չի կարող լինել»:*

Երբեք չպետք է ասել, թե սա չնչին պակասություն է, չարժե ուշք դարձնել դրա վրա: Բայց դաստիարակության գործում մեծ ու փոքր, նշանավոր ու աննշան պակասություններ չկան, այլ ամեն չնչին թերության վրա ևս պետք է նայել իբրև ապագա մեծ չարիքի վրա:… Ջրի մի կաթիլը չնչին բան է, բայց երբ շարունակ կաթում է, քարն անգամ ծակում է: Այս մտքով է, որ մի գերմանացի մեծ մարդ ասում

է. *«Հանդգնություն է միլիոն գողանալը, բայց ավելի մեծ հանդգնություն է լումա գողանալը»:* Այս պատճառով երեխայի մեջ նկատված առաջին անհնազանդությունը, առաջին սուտը, առաջին հպարտությունը պետք է տեղնուտեղը չծլարձակած՝ ոչնչացնել, որպեսզի ողջ ոգին չվարակի, բնավորություն չդառնա:

Ահա մի լավ օրինակ:

Հունաց մեծ Թեոդոս կայսրը, որին Եկեղեցին սրբերի շարքն է դասել, մի օր մտնում է իր որդու սովորելու սենյակը՝ նրա դաստիարակությունը տեսնելու: Տեսնում է, որ դաստիարակ Արսեն սարկավագը ոտքի վրա է, իսկ Արկադ մանուկը դաս է սովորում՝ թագը գլխին դրած: Կայսրը զայրացած հարցնում է.

«Այս ի՞նչ բան է, աշակերտը նստած է, ուսուցիչը՝ կանգնած»:

«Թող ծանր չթվա քեզ, տէ՛ր իմ արքա,- պատասխանում է Արսեն Սարկավագը,- քանզի անկարելի է, որ նըստած սովորեցնեի թագավորի որդուն, որն իր հոր աթոռակիցն է»:

Այդ ժամանակ կայսրն Արկադիի գլխից դեն է նետում թագը և նրան հրամայում բաց գլխով կանգնել ուսուցչի առաջ, իսկ Արսենին ստիպելով նստեցնում է աթոռի վրա՝ ասելով.

«Իմ որդին այն ժամանակ արժանի կլինի ինքնակալության, երբ գիտության հետ էլ կկրթվի աստվածպաշտության և ընտիր քաղաքավարության մեջ»:

Հիանալի խոսքեր:

12-րդ դարի մեր նշանավոր հայրապետներից Սուրբ Ներսես Շնորհալին ասում է.

«…Ձեր զավակներին աղոթք սովորեցրեք, որ վատ խոսքերին ու հայհոյանքներին չվարժվեն, որովհետև մանկության ժամանակ ծնողների խրատը ավելի է դրոշմվում մանուկների մտքում անջնջելի կերպով, որի փոխարեն պիտի վարձատրվեք»:

ՇՆՈՐՀՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԸ

Մեզանից յուրաքանչյուրը օժտված է յուրահատուկ մի պարգևով և շնորհքով: Ոմանք աշխատում են իրենց ուղեղներով, ուրիշներ՝ ավելի լավ են ձեռքի աշխատանքների մեջ, դրա համար էլ կան՝ բժիշկներ, գիտնականներ, ուսուցիչներ, քաղաքագետներ, երկրագործներ, արհեստավորներ, բանվորներ, հոգևորականներ և այլն:

Կարևորը շնորհների քանակը չէ, այլ օգտագործման ձևն ու եղանակը: Մեր կողմից մեծ սխալ կլինի խոստանալ Աստծուն Իր կամքը կատարել վաղը, երբ մենք մեր լավագույնը կարող ենք կատարել այսօր:

Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղած իր առաջին նամակում ասում է. *«Մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, մյուսին՝ գիտության խոսք՝ նույն Հոգուց, մյուսին՝ հավատ՝ նույն Հոգով, մյուսին՝ բժշկումների շնորհ՝ նույն Հոգով, մյուսին՝ զորավոր գործերի կարողություններ, մյուսին՝ մարգարեություն, մյուսին՝ հոգիները զանազանելու շնորհ, մյուսին՝ տեսակ-տեսակ լեզուներով խոսելու շնորհ….» (Ա. Կորնթ. 12:8-11):*

Եթե այս բոլոր շնորհներն ու տաղանդները ճիշտ կերպով իրար մոտ գան ու համադրվեն, սովը կվերանա աշխարհի երեսից, կոտրված սրտերն ու հոգիները վերստին ուժ կառնեն և մենք կունենանք այն սիրո հրաշալի կառույցը, որը մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, երկու հազար տարի առաջ հիմնեց երկրի վրա:

Այս պատմությունը հետաքրքիր է.

Պատմում են, թե մեծ գիտնական Էյնշտեյնը (որը բնական գիտությունների գծով գիտնական էր և շատ հայտնի էր աշխարհում), շրջում էր Ամերիկայի զանազան համալսարաններում խոսելով Հարաբերականության տեսության մասին: Հերթական մի օր, երբ նա գնում էր համալսարան, նրա վարորդը ասում է. «Դոկտոր Էյնշտեյն, ձեր այս դասախոսությունը այնքան եմ լսել, որ այն կարող եմ կրկնել անսխալ կերպով» և ցանկություն է հայտնում ինքը խոսելու: Մեծ գիտնականը լինելով կատակասեր բնավորության տեր մի մարդ, պատասխանում է. «Իրականում, ուր որ մենք գնում ենք ինձ երբեք չեն տեսել, հետևաբար ճանաչող չկա, արի փոխենք մեր զգեստները և այսօր դու խոսիր իմ տեղը»: Ասում են ու անում:

Այդ երեկո Էյնշտեյնի վարորդը անթերի կերպով է կատարում դասախոսությունը, սակայն վերջում ներկա գիտնականներից մեկը, մաթեմատիկական մի բարդ խընդրի մասին հարց է տալիս նրան: Վարորդը արթնամիտ ու պատրաստ մեկը լինելով՝ առանց ինքնիրեն կորցնելու ասում է. *«Պարոն, զարմանում եմ, որ ինձ այդպիսի մի պարզ հարց եք տալիս, դրան նույնիսկ սրահում նստած իմ վարորդը կարող է պատասխանել…»: Չգիտես ծիծաղես, թե՝…*

Այս պատմությունը ի՞նչ է ցույց տալիս, որ մենք բոլորս լավ գիտակցենք, թե ինչքան էլ ուշիմ, խելացի, տաղանդավոր ու շնորհքով մեկը լինենք, չենք կարող ուրիշ որևէ մեկին փոխարինել և ոչ էլ օգտագործել նրան տրված պարգևները: Մենք կարող ենք գործածել այն տաղանդներն ու շնորհները, որոնք միայն մեզ են տրված Աստծու կողմից: Տեր կանգնեք ձեր շնորհներին և Աստծու տված պարգևներին:

ԵԹԵ ԲԺԻՇԿ ԿԱՆՉԵՍ, ԿՈՒՇԱՆԱ:
ԵԹԵ ԲԱՐԵԿԱՄԻԴ ԿԱՆՉԵՍ, ԿՈՒՇԱՆԱ:
ԲԱՅՑ, ԵԹԵ ԱՍՏԾՈՒՆ ԿԱՆՉԵՍ, ԵՐԲԵ'Ք ՉԻ ՈՒՇԱՆԱ: ԿԱՆՉԻՐ ՆՐԱՆ...

Այո՛, կանչեք Աստծուն ամեն օր ձեր աղոթքի միջոցով: Հիսուս ոչ միայն շեշտում է աղոթքի կարևորությունը, այլ նաև՝ անձանձրույթ աղոթքի անհրաժեշտությունը: Աստծու հետ հաղորդակցվելու ու Նրան կանչելու միակ ճանապարհը՝ Աղոթքն է: Աղոթեցեք և խնդրեցեք ու ձեզ պիտի տրվի: Մի սպասեք, որ նեղություն և դժվարություն ունենաք, միշտ հիշեք ու կանչեք Աստծուն:

ԱՆՀԱՎԱՏ ԴԵՂԱԳՈՐԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մի հավատացյալ երիտասարդ ընկերանում է անհավատ դեղագործի հետ ու հրավիրում իր տուն ճաշելու: Երկար զրուցելուց հետո, նա առաջարկում է ընկերոջը իր հետ վերցնել Աստծո խոսքից մի համար՝ մշտական իր մոտ պահելու համար: Անհավատ երիտասարդը հազիվ է համաձայնվում, բայց չի մերժում ընկերոջը: Նա պատահական մի համար է վերցնում որի վրա գրված է լինում. *«Նեղությանդ օրը ինձ կանչիր, ես քեզ պիտի ազատեմ, ու դու ինձ պիտի փառավորես»:* Երիտասարդը ծիծաղում է ու ասում. *«Այդ ինչ՞ նեղություն պիտի պատահի ինձ, որ ես Աստծուն կանչեմ»:* Խոսքերն ասելուց հետո աստվածաշնչյան համարը դնում է իր ծոցագրպանի մեջ և հեռանում:

Մի օր ուշ երեկոյան իր դեղատան մեջ նստած, գալիս է մի աղջնակ ու դեղ գնում իր մայրիկի համար, ով համարյա արդեն մահացու վիճակում էր: Դեղագործը տալիս է դեղորայքը և աղջիկը հեռանում է: Որոշ ժամանակ անց հանկարծ նա աչքը գցում է աղջկա տված դեղատոմ-

սին ու տեսնում, որ փոխանակ համապատասխան դեղը տալու, տվել էր ամենաբարձր չափով (դոզայով) ուրիշ դեղորայք: Նա անհանգստանում է, քանի որ գիտեր, որպեներ անց նրա ... մայրը պիտի մահանար: Անմիջապես դուրս է վազում դեղատնից աղջկան փնտրելու, բայց տեսնում է, որ ոչ մեկը չկա· նա գնացել էր, իսկ դրսում արդեն մութ էր:

Ներս է գալիս ու տագնապած և սրտնեղված պտըտվում: Հանկարծ հիշում է աստվածաշնչյան այն համարը, որը վերցրել էր ընկերոջ տանից, հանում է այն և ասում. *«Աստված իմ, մինչև հիմա քեզ չեմ հավատացել, բայց, եթե դու հրաշք գործես և դեղը չհասնի այդ կնոջը, խոստանում եմ, որ ամբողջ կյանքում քեզ կծառայեմ»*:: Ահա այսպես աղոթելուց հետո մի տեսակ խաղաղություն է իջնում իր վրա ու սպասում է, որ ինչ որ բան կփոխվի: Դեռ մեկ ժամ չանցած դեղատուն է գալիս աղջիկը և ասում. *«Բժիշկ, վազեցի, դեղը ձեռքիցս ընկավ կոտրվեց, ինձ նոր դեղ կտա՞ք»*: Բժիշկը այլևս չէր լսում աղջկա խոսքերը, այլ իր աչքերը երկինք բարձրացրած՝ փառք էր տալիս Աստծուն:

ԳԵՂԵՑԻԿ ՊԱՏԱՍԽԱՆ

Պարսիկ իմաստասեր Սաատին այցելում է մի մեծահարուստի և դրամ խնդրում աղքատ ընտանիքների օգնության համար:

«Կարո՞ղ ես ինձ բացատրել,- հարցնում է հարուստը իմաստունին,- թե ինչո՞ւ է իմաստունը ծեծում հարուստի տան դուռը, իսկ հարուստը՝ ոչ»:

«Որովհետև,- պատասխանում է իմաստունը,- իմաստունը գիտի դրամի օգտակարությունը, մինչդեռ հարուստը չգիտի իմաստության կարևորությունը»:

ՄՈՐ ՍԻՐՏԸ

Բոլոր մայրերը անկախ իրենց գույնից ու սեռից մայր են, հարգանքս ու սերս բոլորի նկատմամբ, բայց ինձ համար իմ մայրը ուրիշ մի մայր է: *«Ինչո՞ւ, ի՞նչ է տարբերությունը»*,- կասեն մարդիկ: Տարբերությունը նրանում է, որ նա ի'մ մայրն է, մյուսներն էլ թող իմ նման մտածեն, նրանք էլ թող լինեն նրա'նց մայրերը, միայն կարևորը սերն ու գնահատանքն է: Բոլոր մայրերը նույն ցավով են ծնում իրենց երեխաներին, բայց իմ մոր ցավերը տարբեր են եղել ինձ համար:

Աշխարհը կուզենայի տալ նրան, որպեսզի երբեք զավակ ծնելու ցավից բացի, այլ ցավ չզգար և առավելապես զավակի կորստյան ցավը չզգար: *«Իմ անուշիկ մայրիկ, քեզ համար ես մի մեծ նվեր եմ պատրաստել այսօր, նվեր, որը ոչ մի բանով չի գնվի. Իմ որդիական սիրո անխառն ու սրտանց համբույրը, իմ շնորհակալության համբույրը, որ դու կաս, որ ես ապրում եմ քո շնորհիվ»:*

Թող յուրաքանչյուր զավակի համար իր մայրը տարբեր լինի և նա սիրի իր մորը առանձնահատուկ երկյուղածությամբ ու իր սերը գործի վերածի, որպեսզի մոր մայրամուտին ստանա նրա բացառիկ օրհնությունը. *«Օրհնյալ լինես զավակս»:* Իմ կարծիքով ավելի մեծ երջանկություն չկա, քան մոր օրհնությամբ ապրելը:

ԿՈՒՅՐ ԵՐԵԽԱՅԻ ՎԻՇՏԸ

Կույր երեխան խոսում է Աստծու հետ և ներկայացնում իր խնդրանքը·

«Տեր Աստված, լսել եմ, որ արևը շատ հմայիչ է··· Գետափին ջրի վրա կախված ծաղիկների տեսարանը արտակարգ գեղեցիկ է··· Օդային միջատների և համաչափ

ծլվլոցներով թռչող թռչունների թռիչքները չտեսնված բաներից են:

Լսել եմ, որ գիշերները երկնքում թաքնված լույսեր են երևում··· իր ալիքների նման մելամաղձոտ ծովում սպիտակ առագաստանավերը սահում ու գնում են···

Ասում են, ծաղիկների գույները իրենց բուրմունքից էլ ավելի ուշագրավ են···· Հովիտները, լեռները, մարգագետինները, ջրերը, հատկապես անտառները արշալույսներին, այնքան գեղեցիկ, այնքան հմայիչ են, որ նման պերճանքի և շքեղության առջև մարդը պետք է, որ ծնկաչոք արտահայտի իր հիացմունքը:

Համենայն դեպս ո՛չ ծովը, ո՛չ ծաղիկների գույնը, ո՛չ երկինքը, ո՛չ արևը, ո՛չ անտառները, ո՛չ այդ լավ մրգերը, ո՛չ թռչունները, ո՛չ էլ լույսը տեսնելուց զրկված լինելս ինձ ցավ չեն պատճառում··· Աստված իմ, ո՛չ բոլորովին՝ ո՛չ:

Ավա՜ղ, այս անցավոր աշխարհի գեղեցկություններից ո՛չ մեկը չէի ցանկանա տեսնել,- ՄԻԱՅՆ ԹԵ ԿԱՐՈՂԱՆԱՅԻ ՄՈՐՍ ՏԵՍՆԵԼ»:

Հուզիչ էր կույր երեխայի խնդրանքը և ցանկությունը Աստծուն, հնարավորությունը ունենալ բոլոր գեղեցկությունների փոխարեն տեսնել միայն իր ՄՈՐԸ: Երանի բոլոր մարդիկ գիտակցեին իրենց ունեցած հրաշալիքի՝ լույսը տեսնող աչքերի գինը:

Պողոս Առաքյալը հորդորում է բոլոր զավակներին, նրանց ուշադրության հանձնելով այս խոսքերը· *«Որդինե՛ր, հնազանդ եղեք ձեր ծնողներին ի Տեր, որովհետև դա է ճիշտը» (Եփես· 6·1)* : Հնազանդվել նշանակում է հարգել ու սիրել:

ՄՈՐ ՍԵՐԸ

Ընտանիքը աշխարհի սիրտն է: Իսկ այս սրտում գլխավոր երակը մայրն է, որի միջից արյան փոխարեն սեր է հոսում: Անհատակ մի ծով և անհուն մի տիեզերք է մոր սիրտը: Մայրական սերը նմանվում է մաքուր ու անարատ կաթի:

Ծաղկաստան է մոր սիրտը: Իր զավակին կրծքին սեղմելով ողողում է նրան իր սրտի երփներանգ ծաղիկների բույրով: Մանուկը շնչում է այդ դրախտային մթնոլորտից և խմում աստուածային սիրո նեկտարից:

Մայրը մեր սերն է, ուրախությունն ու քաղցրությունը:

Ինչքան գեղեցիկ խոսքեր ու արտահայտություններ են պետք, նկարագրելու համար, թե *«Ո՞վ է մայրը» և կամ «Ինչպիսի՞ն է մայրը»:* Մայրը մի նոր մարդու կյանք տվողն է, ստեղծիչը մի նոր էակի, որի համար շատ անգամներ եթե պետք է եղել, գիտակցորեն զոհել է իր երիտասարդ կյանքը:

ՄՈՐ ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆԸ

Ճապոնիայում տեղի ունեցած երկրաշարժից հետո, երբ փրկարարները կենդանի մարդկանց դուրս էին բերում փլատակների տակից, հանկարծ նկատում են մի կնոջ՝ շատ տարօրինակ դիրքով, կարծես թե նա աղոթելիս լիներ: Փրկարարներից մեկը ձեռքով ձգվում է դեպի կինը՝ ստուգելու համար ո՞ղջ է նա, թե՝ ոչ, սակայն կնոջ սառած մարմինը տեսնելով, նրանք հեռանում են այլ կենդանի մարդկանց փրկելու համար: Սակայն ստուգող տղամարդը կասկածելով նորից ետ է գալիս և ձեռքով ավելի մանրամասն կնոջ մարմինը շարժելուց հետո, հանկարծ բարձր ձայնով

կանչում է իր ընկերներին. *«Երեխա՛. Այստեղ երեխա կա»:* Փրկարարներն իրենց ամբողջ ուժը գործադրելով, մի կերպ երեխային դուրս են բերում փլատակներից: Նա ողջ էր: Մայրը այդպիսի դիրք էր ընդունել, որպեսզի իր երեք տարեկան որդուն փրկի: Բժիշկը երեխային ստուգելու համար վերցնում է նրա վրայի ծածկոցը, որտեղ դրված է լինում բջջային հեռախոս. իսկ վրան հաղորդագրություն. *«Եթե դու փրկվես, իմացի՛ր, որ ես քեզ սիրում եմ»:*

Մայրական սերը ո՛չ սահման է ճանաչում, ո՛չ ազգություն, ո՛չ էլ փիլիսոփայություն է, այլ՝ ամբողջական զոհողություն:

Աստված սիրում է մայրերին, քանի որ նրանց ստեղծելու շնորհք տվեց:

Եկե՛ք սիրենք մեր մայրերին առանց որևէ ակնկալության, երբ նրանք ողջ են և պետք ունեն մեր սիրույն, օգնության և գուրգուրանքին: Տանք այդ հրաշալի հաճույքը նրանց:

«ՏԵՐ ՀԱՅՐ, ԻՆՉՈ՞Ւ ՄՈԼԼԱՅԻ ՀԵՏԵՎԻՑ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ ՀԱՎԱՏԱՑՅԵԼՆԵՐ ԵՆ ԳՆՈՒՄ, ԻՍԿ ՄԵՐ ՔԱՀԱՆԱՅԻ ՀԵՏԵՎԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ, Ի՞ՆՉՆ Է ՊԱՏՃԱՌԸ»:

Ահա թե ի՞նչ տեղի ունեցավ ինձ հետ երեսունչորս տարիներ առաջ:

Ես երիտասարդ քահանա էի, կարելի է ասել նորընծա, ինչպես այն ժամանակ կոչում էին նոր ձեռնադրվածներին: Մի օր, երբ էջմիածնի գյուղերից մեկն էի գնացել մկրտություն կատարելու, մինչև արարողության սկսվելը, գյուղացիներին մի քանի հարցեր էին հետաքրքրում, որոնց սիրով պատասխանեցի, ինչքան որ հնարավոր էր: Անշուշտ հարցերը ավելի վերաբերվում էին հոգևոր կյանքին, որը նրանց համար մութ աշխարհ էր, քանի որ կարգերը անաստվածյան էին և նույնիսկ մեզ հոգևորականներիս արգելված էր մարդկանց բացատրել և սովորեցնել ճշմարիտ հավատը: Ահա այս պայմաններում, հանկարծ գյուղացիներից մեկը անկեղծ զարմանքով և նույնիսկ կարելի է ասել միամտությամբ ինձ հարցրեց.

«Տեր Հայր, ինչո՞ւ մոլլայի հետևից հարյուր հազար հավատացյալներ են գնում, իսկ մեր քահանայի հետևից մի քանիսը, ի՞նչն է պատճառը»: Պատկերացնո՞ւմ եք, նոր երիտասարդ քահանա, ինչպես ժողովուրդն է ասում այս պարագայում, երբ դիմացինը երիտասարդ է. «դեռ կարգին մորուք էլ չունի» ակնարկելով փորձառությունը ու հանկարծ այսպիսի մի հարց, որին ճիշտ չպատասխանելու դեպքում կարող էր հեղինակազրկվել որևէ քահանա և նրա հետ անշուշտ նաև Եկեղեցին: Մտքումս արագ-արագ Աստծուն օգնության էի կանչում, նաև բոլոր սրբերին, էլ

ո՞ւմ ասես, որպեսզի այս միամիտ, պարզ գյուղացու հարցին ճիշտ պատասխանեմ: Հանկարծ միտքս լուսավորվեց, գտա պատասխանը:

Այս բոլորը անշուշտ արագ կատարվեց: Եվ ես պատասխանը տալուց առաջ սկսեցի հաշվել դիմացս նստած տղամարդկանց. «*Մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տաս, գնացինք*»: «*Ո՞ւր*»,-անմիջապես եղավ իմ հարցի պատասխանը: «*Այ, հենց այստեղ է գաղտնիքը*» - գոհ պատասխանեցի ես: «*Երբ մոլլան իր հավատացյալներին ասում է, գնացինք, ոչ մեկը չի հարցնում, թե ո՞ւր, այլ հլու հնազանդ հետևում են իրենց հոգևոր առաջնորդին, որին վստահում են, քանի որ գիտեն, թե հովիվը իրենց կործանման չի տանի: Հիմա կարծում եմ հասկանալի է, չէ, թե ինչո՞ւ մեր քահանաների հետևից չեն գալիս, որովհետև ամեն մի հայ մարդու մեջ մի առաջնորդ ու մի հովիվ է նստած, ո՞վ է ուզում ենթարկվել, ոչ մեկը, բոլորն էլ իրենց խելացի են կարծում*»:

Գյուղացիները լիաթոք ծիծաղեցին ու հաստատեցին իմ ասածը և գոհ մնացին իմ պատասխանից: Ես էլ անշուշտ փառք տվեցի Աստծուն, որ ինձ այդ դժվար պահին օգնության հասավ: Դուք էլ, երբ կանգնած եք մի դժվարության առաջ, մի՛ զլացեք և հույսներդ Աստծու վրա դնելով, կանչեք Նրան օգնության: Նա Ձեր կողքին է ու անպայման կհասնի:

Հիսուսի խոսքերն են. *«Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեց և ժանգ ոչնչացնում են, և ուր գողեր պատերն են ծակում, ու գողանում, այլ գանձեր դիզեցե՛ք ձեզ համար երկնքում… քանի որ, ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Մատթ. 6:19-21):*

Ահա թե ի՞նչ է ասում ամեն հարստություն տվող Հիսուս. «*Ձեզ համար գանձ մի՛ հավաքեք երկրի վրա»:* Մարդը լսելով այս զարմացած և նույնիսկ զայրացած ասում է. *«Ինչո՞ւ, չէ՞ որ գանձով ենք ապրում այս աշխարհում: Գանձ որ չհավաքենք, մեզ ո՞վ կպահի, մեր որդիներին ո՞վ կկերակրի, կհագցնի, ինչո՞վ կհոգանք մեր հազարավոր կարիքները: Մեզ հարկավոր է տուն ու տեղ ունենալ, ծառա ու աղախին պահել, մեծ-մեծ գործեր սկսել, կյանքը վայելել, մեզանից հարուստների հետ ոտք մեկնել… և ուրիշ հազար ու մի տեսակ փառք ու պատվի տիրանալ: Գանձ որ չհավաքենք, այս բաներն ինչո՞վ պետք է ձեռք բերենք»:*

Զարմանալի է, որ ճիշտ չենք կարողանում հասկանալ Հիսուսի խոսքերը. *«Ձեզ համար գանձ մի՛ հավաքեք երկրում», չպետք է կարծենք, թե նա հակառակ է գանձ ունենալուն: Նա հակառակ է գանձ հավաքելուն, գանձ դիզելուն: Նա արգելում է ոչ թե գանձ, դրամ ունենալ, այլ աննպատակ դրամ հավաքելը: Ինչո՞ւ; Որովհետև ինչպես որ ավելորդ կերակուրները ծանրացնում են մարդու ստամոքսը և վնասում առողջությանը, այդպես էլ ավելորդ դրամ դիզելը խանգարում է հոգու կյանքին և ամբողջովին փչացնում քրիստոնեական վարքն ու բարքը…»: Հիսուս ավելացնում է. «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել.*

կա՛մ մեկին կատի եւ միւսին կսիրի, կա՛մ մեկին կմեծարի և մյուսին կարհամարհի. չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային (դրամին)» (Մատթ. 6:24):

Փողասերը, արծաթասերը կռապաշտ է, նրա կուռքը դրամն է: Երբ որ նա կատարյալ սիրով, սրտով ու հոգով է սիրում դրամը, նա իր հավատը, հույսն ու սերը տալիս է դրամին՝ ամբողջովին մոռացության տալով Աստծուն: Եվ ոչ միայն Աստծուն, այլ նաև իր ծնողներին, ընտանիքին, հարազատներին, ընկերներին, մի խոսքով՝ ամեն ինչ:

«Ձեր գանձը երկնքում հավաքեցե՛ք»,- ասելով,- Հիսուս Իր խրատն այսպես է վերջացնում. «Որովհետև որտեղ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սիրտը կլինի»: Սա պարզից էլ պարզ է, որտեղ մեր գանձն է, մեր ուշքն ու միտքը, մեր սիրտն ու հոգին էլ այնտեղ է: Հիսուս ցանկանում է, որ մեր ուշքն ու միտքը երկնքում լինի, այնտեղ գանձեր հավաքենք, պալատներ կառուցենք, որոնք հավիտենական են և ոչ ոք չի կարող դրանք մեզանից խլել:

Այս պատմությունը կարծում եմ դրա վառ ապացույցն է.

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ

Հնդկաստանում մի թագավոր կար Գունդաֆոր անունով: Սա ցանկանում է իր երկրում մի քանի պալատներ կառուցել հռոմեացի կայսրերի պալատների նման: Այդ պատճառով նա Ավան անունով մի հարուստ վաճառականի ուղարկում է Հրեաստան, որ այնտեղից պալատ կառուցելու համար մի վարպետ գտնի: Վաճառականի գնացած ժամանակ Քրիստոս երազում երևում է Թովմաս առաքյալին և ասում. *«Այդ եկած մարդու հետ գնա իր երկիրը և քարոզի՛ր Ավետարանը»:* Առաքյալը, մյուս օրը

տեսնելով Ավանին, հայտնում է, որ նրա ուզած վարպետը ինքն է և հետը գնում է Հնդկաստան: Գունդաֆոր թագավորը ուրախանում է, վարպետին ցույց է տալիս պալատների տեղը, շինության համար շատ ոսկի ու արծաթ տրամադրում, իսկ ինքը գնում է ուրիշ երկիր: Առաքյալն ստացած բոլոր գումարները բաժանում է աղքատներին և սկսում քարոզել Ավետարանը:

Անցնում է երկու տարի: Գունդաֆորը գալիս է իր երկիրը և մարդ ուղարկելով վարպետի մոտ, հարցնում՝ *«Գործը որտե՞ղ է հասել, շո՞ւտ կվերջացնես պալատների շինությունը»: Առաքյալը պատասխանում է. «Ամեն բան պատրաստ է, միայն առաստաղը ծածկելն է մնում»: Թագավորն ուրախանում է և էլի ոսկի ուղարկում, որ մնացածն էլ լրացնի: Սբ. Թովմասն այդ գումարներն էլ է բաժանում չքավոր ժողովրդին, որոնք ուրախությունից խոսք չեն գտնում շնորհակալություն հայտնելու:*

Շուտով թագավորը լուր է ստանում, որ ինքը խաբված է: Կանչում է իր մոտ առաքյալին՝ նրան սարսափելի մահով ոչնչացնելու: Երբ առաքյալին բերում են, թագավորը հարցնում է նրան.

«Կառուցե՞լ ես պալատներս»:

«Կառուցել եմ,- պատասխանում է նա,- և ինչ փառավոր պալատներ են»:

«Ո՞րտեղ ես կառուցել, ցո՛ւց տուր տեսնեմ»,- ասում է թագավորը:

«Այդ պալատները դու այս կյանքում չես կարող տեսնել,- պատասխանում է առաքյալը, դու կտեսնես մյուս

աշխարհի գնացած ժամանակ և ուրախ-ուրախ կտեղափոխվես ու հավիտյան կբնակվես նրանց մէջ»:

Թագավորը, այս անհասկանալի խոսքերը լսելով, կարծում է, թե նա համարձակվում է ծաղրել իրեն: Բարկանում է ու կատաղում, բայց որովհետև չէր կարողանում խելքի գալ ու մտածել, թե ինչ անի այդ անամոթ խաբեբային, առժամանակ հրամայում է, որ նրան ու Ավանին բանտ նստեցնեն, մինչև որ նրանց համար մի չտեսնված տանջանք կմտածի: Երբ թագավորն ուշքի է գալիս, վճռում է երկուսի կաշին էլ քերթել ու նրանց այրել: Ոչ ոք չէր համարձակվում բերանից մի խոսք թռցնել թագավորի առաջ, սարսափելի տանջանքից ազատելու էլ ոչ մի հնար չկար: Բայց «Ինչ որ մարդուս համար անկարելի է, այն Աստծու համար շատ հեշտ է», որտեղ մարդը հուսահատվում է՝ իր անզորությունը տեսնելով, այնտեղ Աստված Իր օգնությունն է հասցնում Իր կամքը կատարողներին:

«Այս ի՞նչ բերիր մեր գլխին, մենք կորած ենք»,- ասում է Ավանը բանտում:

«Մի վախեցիր,- ասում էր նրան առաքյալը,- հույս ունեմ, որ մեզ ոչինչ չի պատահի»:

Նույն գիշերը թագավորի եղբայրը երազում տեսնում է իր եղբոր պալատները, առավոտը շուտ գնում է և թագավորին ասում.

«Ես գիտեմ՝ դու ինձ այնքան ես սիրում, որ ինչ էլ խնդրեմ քեզանից, չես խնայի ինձ համար: Տո՛ւր ինձ այն պալատները, որ կառուցել ես տվել երկնքում, իսկ դրա փոխարեն ստացիր ինձնից ամբողջ հարստությունս»:

«Ի՞նչ պալատների մասին ես խոսում»,- զարմացած հարցնում է թագավորը:

Եղբայրը պատմում է իր երազը և թագավորին ասում.

«Ես քեզ այն պալատները չեմ կարող տալ, բայց եթե դու էլ ես ցանկանում այդպիսի պալատներ ունենալ, մենք մի լավ վարպետ ունենք, նա քեզ համար կկառուցի»:

Այս ասելուց հետո թագավորը իսկույն ազատում է բանտարկվածներին, ինքն իր ոտքով գնում նրանց մոտ, մինչև գետին գլուխ տալիս Սբ. Թովմասին և խնդրում նրան, որ ների իր մեղքերը: Իսկ Սբ. Առաքյալը, շնորհակալություն հայտնելով Աստծուն իր գործի հաջողության համար, թագավորին ու նրա եղբորը քարոզում է Սբ. Ավետարանը, մկրտում նրանց և այսպիսով քրիստոնեությունը մտցնում ամբողջ Հնդկաստանում:

Ահա այսպես. կարդացիք չէ՞: Թագավորը հասկացավ, թե ի՞նչ է կարևորը: Մյուս կյանքում մեզ չեն հարցնի, թե ձեր աշխարհում ի՞նչ կերաք, ի՞նչ խմեցիք, ի՞նչ հագաք, ո՞ւմ զարմացրիք, ո՞ւմից փառավորվեցիք և ի՞նչ պատվի արժանացաք: Այնտեղ ձեզ կասեն, *«Ինչ որ երկրային կյանքում կերաք, խմեցիք, վայելեցիք ձեզ լինի, իսկ հիմա տեսնենք՝ արդյոք մի բան ուղարկե՞լ եք այս լուսեղեն, հավիտենական աշխարհի գանձարանում պահելու համար»:* ՄԵՐ ԲԱՐԻ, ԱՐԴԱՐ ՈՒ ՄԱՔՈՒՐ ԳՈՐԾԵՐԸ. ԴՐԱՆՔ ՊԻՏԻ ԼԻՆԵՆ ՄԵՐ ՎԿԱՆԵՐԸ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ:

ԱՅԴ ՍԻՐՈ ՏՈՒՓԸ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՆՆ ԷՐ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆՐԱ ՄԵՋ ՀՈՐ ԵՎ ԱՂՋԿԱ ՍԻՐՈ ՀԱՄԲՈՒՅՐՆԵՐՆ ԷԻՆ, ՈՐՈՆՔ ԵՐԲԵ'Ք ՈՒ ԵՐԲԵ'Ք ՉԵՆ ՀՆԱՆՈՒՄ ԵՎ ՉԵ'Ն ՄՈՌԱՑՎՈՒՄ:

Կարդացե'ք և կտեսնեք, թե ի՞նչ ՍԻՐՈ ՏՈՒՓԻ մասին է այս պատմությունը;

ՀԱՄԲՈՒՅՐՆԵՐ ԷԻ ԴՐԵԼ...

Գործից տուն վերադարձած հայրը, ամբողջ օրվա հոգնությունից սպառված, մտնում է իր հինգ տարեկան աղջնակի սենյակը և տեսնում, որ նա մի մկրատ ձեռքին, ծուռ ու մուռ կերպով կտրտում է նվերի փայլուն թղթերը: Նույնը նախորդ օրը տեսած լինելով՝ մի անգամ ևս բարկանում է նոր, հատուկ նպատակի համար գնված այդ փայլուն թղթերը փչացնելու համար:

Ընթրիքից հետո, աղջիկը ուրախությամբ հորն է տալիս մի տուփ, ծրարված, կտրտված նվերի թղթերով: Հայրը վերցնելով նվերը, բացում է այն և երբ տուփը դատարկ է տեսնում, ավելի է բորբոքվում աղջկա վրա, որ ո՛չ միայն նվերի թղթերը վերջացրել էր, այլ ավելին՝ դատարկ մի տուփ է նվիրում իր հորը: Հոր բարկությունից խորապես վիրավորված, աղջիկը գնում է ննջարան ու անկողին մտնելով սկսում է լուռ արտասվել: Հայրը զգալով, որ նեղացրել է նրա մանկական սիրտը, գնում և փաղաքշական խոսքերով փորձում է հանգստացնել նրան, ասելով. *«Մի՞թե վիրավորական չէր նրա կողմից հորը դատարկ տուփ նվիրելը»:*

Երեխան արցունքները սրբելով ու հեկեկալով պատասխանում է նրան, ասելով.

«Բայց գիտես Հայրիկ, թե ինչքան համբույրներ էի դրել նրա մեջ քեզ համար»…

Տարիներ հետո աղջիկը մեծանում է ու ամուսնանալով գնում մի այլ երկիր:

Ծերության բեռան տակ կքած կարոտակեզ հայրը նամակներ է գրում իր աղջկան, որոնց վերջաբանը լինում է հետևյալը.

«Ամեն անգամ քեզ հիշելիս, գնում ու ինձ նվիրած համբույրներով «լի» տուփիդ մեջ իմ համբույրներն եմ դնում»…

ՀԱՐՈՒՍՏԻ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՂՔԱՏԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

«ՈՎ ՈՐ ՈՒՆԻ, ՆՐԱՆ ԿՏՐՎԻ, ԻՄԿ ՈՎ ՈՐ ՉՈՒՆԻ, ԵՎ ԱՅՆ, ԻՆՉ ՈՐ ՆԱ ԿԱՐԾՈՒՄ Է, ԹԵ ՈՒՆԻ, ԿՎԵՐՑՎԻ ՆՐԱՆԻՑ» (ՂՈՒԿ. 8:18):

Ղուկաս ավետարանչից ավանդված այս հրաշալի բառերը մեզ առիթ են տալիս մտածելու, թե ի՞նչ էր ուզում ասել մեր Տերը. *«Ով որ ունի, նրան կտրվի»:* Արդյոք ինչի՞ մասին էր խոսքը՝ հարստությա՞ն, դրամի՞, կալվածների՞, թե՝ փառք և անուն ունենալու մասին: Անշուշտ՝ ոչ: *«Իմ թագավորությունը այս աշխարհից չէ…»,*- հայտարարում է մեր Տերը: Ոչ մեկը չի կարող Աստծու հետ լինել և Նրան հասկանալ, եթե ինքն իրեն չի ճանաչում ու հասկանում: *«Ով որ ունի»* խոսքը չի նշանակում նյութական բարիքներ ունենալ, այլ՝ գիտակցություն ունենալ և ինքն իրեն ճանաչելու հնարավորությունը ստեղծել: *«Գիտակցություն ունենալ»,*- ըստ Պողոս առաքյալի,- նշանակում է կյանքը ապրել երեք հիմնական գաղափարներով. *«Բարությամբ, արդարությամբ և ճշմարտությամբ»:*

Հավատը խորհրդանշում է Բարությունը: Բարությունը արդեն իսկ հավատ է: Ասում ենք. *«Աստված բարի է»,* ուրեմն բարությունը Աստծու ներկայությունն է մեր մեջ: Հիսուս հայտարարում է. *«…Հայրը իմ մեջս է, և ես՝ Հոր մեջ»* (Հովհ. 10:38):

Երկրորդ՝ Արդարությունը Հույսի ճառագայթն է, եթե մենք հույս չունենանք մեր կյանքում, արդար չենք կարող լինել:

Եվ երրորդ՝ Ճշմարտությունը սիրո ներկայությունն է մեր մեջ:

Այս պատմությունը հետաքրքիր է.

Քաղաքում անվանի ու հարուստ մի պաշտոնյա, մի օր դերձակի մոտից տուն գալու ժամանակ նկատում է մորուքավոր, երկարահասակ մի մարդու: Նրա տեսքից հայտնի էր, թե աղքատ և ցրտից սառած մեկն է, որովհետև սաստիկ ձմեռ էր: Աղքատ մարդը պաշտոնյայի վրա նկատելով նոր ու գեղեցիկ մի վերարկու, համարձակվում է մոտենալ և խնդրել նրան, ասելով. *«Պարոն, ներեցեք, տեսա, որ նոր վերարկու եք գնել, եկա խնդրելու, որ ինձ տաք ձեր հինն ու մաշվածը»: Հարուստը այս խոսքերից ազդվելով հանում է իր նոր վերարկուն և առանց տատանվելու մեկնում աղքատին. «Այ՛ս մեկը վերցրեք, ես վաղը նորը կգնեմ»:* Աղքատը հակառակվում է, բայց ի վերջո համոզվելով հեռանում է վերարկուն վերցրած իր հետ:

Մի ամիս հետո, հարուստը անհանգստանալով, սրտի կաթվածով տեղափոխվում է հիվանդանոց: Բժիշկները նրա տիկնոջը բացատրում են, որ հիվանդի վիճակը անհույս է, միայն Աստված կարող է նրան փրկել: Նրանք իրենց անելիքը կատարելով, թողնում են հիվանդին անգիտակից վիճակում: Որոշ ժամանակ հետո հիվանդը աչքերը բացելով տեսնում է իր մոտ բժշկի սպիտակ զգեստով աղքատին, որը բռնում է հարուստի ձեռքը ու ասում. *«Դու ողորմած և բարի մարդ ես ու պիտի ապրես»:* Հիվանդը առողջանում է ու խնդրում նորից տեսնվելու այդ մորուքավոր բժշկի հետ և ինչքան մեծ է լինում նրա զարմանքը, երբ իրեն հայտնում են, թե հիվանդանոցում ոչ մեկ մորուքավոր կամ իր նկարագրածի նման բժիշկ չկա, ոչ էլ երբևէ եղել է: Ավելին, իր հիվանդության օրերին միայն իր տիկնոջ և բուժող բժիշկներին էր թույլատրված իր սենյակը

մտնել, ուրեմն ոչ ոք չէր կարող իրեն այցելած լինել: Հայտնի է, թե մի հրաշք էր եղածը:

Ասվում է, թե մեծահարուստը առողջանալով, երբ վերադառնում է տուն, վաճառում է իր բոլոր հագուստները և աղքատներին բաժանում»:

Ուստի, թող այս հոգեշահ իրական պատմությունը մխիթարություն և խթան հանդիսանա բոլոր նրանց համար, որոնք ողորմություն ու բարություն գործելով, հույս ունեն հասնելու Երկնքի Արքայության:

Թող Աստված բոլորիս հոգիների և գիտակցության մեջ իրապես բարությամբ ապրելու ուժը պարգևի, որպեսզի արդար ու ազնիվ լինենք և մանավանդ մեր կյանքի ընթացքում Հիսուս Քրիստոսի ճշմարտության սերմերը մարդկանց մեջ կարողանանք ցանել:

«Նրանցից մեկը (փարիսեցի) նրան փորձելով՝ հարցրեց. «Վարդապե՛տ, Օրենքի մեջ ո՞ր պատվիրանն է մեծ»: Եվ Հիսուս նրան ասաց. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով: Այս է մեծը և առաջին պատվիրանը. և երկրորդը սրա նման է. պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. 22: 35-40):

ՀԱՎԱՏԱ ՄԻԱՅՆ ՔՈ ՏԵՐ ԱՍՏԾՈՒՆ
(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ)

Ժամանակով մի բարի թագավոր կար: Նա սովորություն ուներ ամեն իրիկուն հասարակ հագուստներով շրջելու քաղաքում, որպեսզի տեսնի, թե ինչպե՞ս է ապրում իր ժողովուրդը:

Մի երեկո՝ իր սովորական պտույտի ժամանակ, տեսնում է մի աղքատ մարդու, որն իր խրճիթի դռան առջև նստած, աղոթում էր ու մրմնջում.

«Տեր Աստված, ինձ 100 ոսկի տուր»:

Թագավորը լսում է ու անցնում: Քիչ այն կողմ գնալով, տեսնում է մի ուրիշ աղքատ մարդու, որը նույնպես աղոթում էր ու ասում.

«Տեր թագավոր, ինձ 100 ոսկի տուր»:

Հետևյալ օրը թագավորը հրամայում է սկուտեղի վրա 100 ոսկի դնել, ծածկել փլավով ու հավի մսով և ուղարկել այն աղքատին, որը թագավորից էր 100 ոսկի խնդրում:

«Այն հիմարին էլ թող Աստված տա»,- ինքնիրեն մրմնջում է թագավորը՝ մտածելով մյուս աղքատի մասին:

Նույն օրը երեկոյան թագավորը նորից դուրս է գալիս պալատից և ուղղվում դեպի այն աղքատի տունը, որին 100 ոսկի էր ուղարկել: Աղքատը, իր խրճիթի դռանը նստած, դարձյալ աղոթում էր ու ասում.

«Տեր թագավոր, ինձ 100 ոսկի տուր»:

Այս լսելով՝ թագավորը շատ է զարմանում:

Մոտենում է ու հարցնում·

«Ա՛յ մարդ, թագավորի կողմից այսօր քեզ փլավ չբերի՞ն:
Բերին, շնորհակալ եմ:
Կերա՞ր:
Կերա:
Ի՞նչ կար մեջը:
Նուշ ու չամիչ:
Ուրի՞շ:
Հավի միս:
Ուրիշ բան չկա՞ր:
Ո՛չ:
Բոլորը կերա՞ր:
Ո՛չ, շատ էր: Մնացածը տվեցի ինձ պես աղքատ ու քաղցած հարևանիս»:

Թագավորը մորուքը շոյում է ու հեռանում: Քիչ այն կողմ տեսնում է մյուս աղքատին, ով ասում էր Աստծուն.

«Շնորհակալ եմ, Տե՛ր Աստված, որ լսեցիր աղոթքս ու 100 ոսկի ուղարկեցիր»:

Թագավորը համոզվում է, որ ա՛յս մարդն էր խելացի: Նա դիմել էր ոչ թե իր աշխարհիկ տիրոջը՝ թագա-

վորին, այլ Աստծուն, որ ղեկավարում է ոչ միայն մարդկանց, այլև ամբողջ տիեզերքը:

Դուք էլ ձեր կյանքում Աստծուն խնդրող աղքատի նման շարժվեցե՛ք:

Խնդրեցեք ոչ թե երկրավորներին՝ մարդկանց, այլ՝ Ամենակալին: Նա է ձեզ բուժողը, հասկացողը, օգնողը, սիրողը և ճշմարտության ճանապարհը ցույց տվողը: Ապավինեցեք Նրա զորությանը:

ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄՈԼՈՒԹՅՈՒՆԸ

«ՏԵՐԸ ՀԱԿԱՌԱԿ Է ԱՄԲԱՐՏԱՎԱՆՆԵՐԻՆ , ՆԱ ՇՆՈՐՀ Է ՏԱԼԻՍ ԽՈՆԱՐՀՆԵՐԻՆ» (ԱՌԱԿ. 4:34):

Յուրաքանչյուր մարդ կարող է հարց տալ, թե՝ *«Ո՞վ է ամբարտավանը»:* Հայերեն լեզվի բառագրքում *«ամբարտավան»* բառի դիմաց գրված է հետևյալ բացատրությունը. *«Մի մարդ, որը հպարտ ու գոռոզ է»:* Այս բառին իբրև հոմանիշ դրված են՝ *«ինքնահավան»* և *«մեծամիտ»* բառերը:

Այսօր 21-րդ դարում հոգեկան հիվանդագին մի վիճակ է տիրում մեր շուրջը: Մարդիկ ուղղակի տառապում են *«մեծության»* և *«ինքնահավանության»* մոլուցքից:

Այս պատմությունը ճիշտ սրա մասին է.

Հին Հունաստանում ապրող մի ոմն իմաստուն ոսպ (աղքատի կերակուր) էր ուտում ծառի տակ: Նրան է մոտենում մի մեծահարուստ և հպարտ մի պալատական հռետոր ու ծաղրանքով խրատում. - «Ով իմաստուն մարդ, եթե դու քո խելացիությանդ հետ մի քիչ էլ շողոքորթություն ու հպարտություն ունենայիր և կարողանայիր կեղծավորություն անել, այժմ պալատում փառահեղ ճաշ կուտեիր»:

Իմաստունը անվրդով պատասխանում է.

«Իսկ դու, ով ստախոս, եթե ոսպով բավարարվեիր, կարիք չէիր ունենա կեղծավորություն անելու և ստորանալու մեծերի առջև»:

Համեստ և խոնարհ մարդուն երջանիկ ապրելու համար բավական է աշխարհի մի խաղաղ անկյունը՝ շրջապատված սիրելի անձերով, մի պատառ հացը ու հոգու խաղաղությունը:

Ամեն մարդ պետք է լավ ճանաչի իր անձը, որպեսզի իմանա իր բարի հատկությունները, վստահի իրեն և հաջողություն ունենա կյանքում, սակայն որևէ մեկը իրավունք չունի իրեն վերագրելու այնպիսի արժանիքներ, որոնք չունի և ոչ էլ իրավունք ունի վիրավորելու ուրիշներին, որքան էլ նրանցից բարձր լինի իր հարստությամբ, մտքով, հեղինակութեամբ ու գեղեցկությամբ:

Խոնարհությունը անզորության և վախկոտության նշան չի, *(ինչպես սխալմամբ կարծում են որոշ մարդիկ),* ու ոչ էլ մարմնավոր և կամ մտային հիվանդություն: Նա օրհնություն, առաքինություն և շնորհք է:

Կ. Պոլսի Պատրիարք Պողոս Ադրիանուպոլսեցին իր «Խրատի Թանգարան» Գրքի *«Հպարտություն»* բաժնում ասում է.

«ԻԳ. Ամեն հպարտ կա՛մ տգետ է, կամ հանդուգն: Տգետ է, որովհետև չունեցած բարին կարծում է, թե ունի, քանզի հպարտներին հատուկ է մտքով կուրանալ, և հանդուգն է, որովհետև ունեցած սակավ բարիքներով կամենում է ընկերների մեջ առավել բարձր երևալ, որով և արհամարհում է ուրիշներին՝ իբրև բարիքներից զուրկ եղողներին»:

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՅՈԹԸ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐԻՑ (*Նախանձ, Բարկություն, Ծուլություն, Ագահություն, Շատակերություն և Ցանկասիրություն*) ՄԵԿՆ Է, հեռու մնացեք նրանից:

ՀԻՍՈՒՍ ԱՍՈՒՄ Է. «ՈՎ ՍԻՐՈՒՄ Է ԻՐ ԱՆՁԸ, ԿԿՈՐՑՆԻ ԱՅՆ, ԻՍԿ ՈՎ ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԻՐ ԱՆՁՆ ԱՏՈՒՄ Է, ԱՅՆ ԿՊԱՀԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ» (ՀՈՎՀ. 12:25):

«Վաճառեցեք ձեր ինչքերը և ողորմություն տվեք. և ձեզ համար շինեցեք չհնացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ոչ գողն է մոտենում, և ոչ ցեցը փչացնում, որովհետև ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (ՂՈՒԿ. 12:33-34):

Ավելի պարզ, Հիսուս մեզ հորդորում է կյանքում ժամանակավոր արժեքներ *(տուն, թանկարժեք մեքենաներ, ունեցվածք, դրամ)* հավաքելու փոխարեն, բարի ու արդար գործեր կատարել և արժանանալ Երկնքի Արքայության, քանի որ միայն բարեսիրտ մարդն է, որ կարող է դրան հասնել:

Այս պատմությունը կարծում եմ հետաքրքիր կլինի ձեզ համար:

ՀԻՄԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Մի թագավոր իր մոտ է կանչում արքայատան ծաղրածուին և նրան տալով իր գավազանը, ասում է. *«Հիմա քեզ հռչակում եմ Հիմարների Հրամանատար: Պահիր այս գավազանը որպես նվեր ինձանից: Եթե մի օր գտնես քեզանից ավելի գերազանց հիմարի, նրան կհանձնես այս գավազանը»:*

Այս խոսակցությունից շատ տարիներ են անցնում: Ծաղրածուն այդպես էլ չի կարողանում գտնել արժանի մի հիմարի, որ նրան հանձնի գավազանը:

Մի առավոտ շուտ ծաղրածուն այցելում է թագավորին, որն իր ննջարանում մահամերձ վիճակում էր: Ծաղրածուն հարցնում է նրան, թե՝ *«Թագավորը տեղյա՞կ է, թե ո՞ւր է գնում կամ գիտի՞, թե ո՞ւր պիտի հասնի իր ճանապարհորդությունը»:*

«Ոչ, պատասխանում է թագավորը հոգնած,- չգիտեմ, թե ո՞ւր եմ գնում, միայն գիտեմ, որ պիտի մեռնեմ»:

«Եթե գիտեիր, որ պիտի մեռնես, ինչո՞ւ այսքան գանձեր հավաքեցիր, քանի ոչ մի լումա իսկ չես կարող հետդ տանել»:

«Ճիշտ ես, բայց այդ մասին երբեք չմտածեցի: Ո՛չ մեկը և ո՛չ էլ դու ինձ այդ մասին չասացիք»:

«Զարմանալի է, ամեն բանի մասին մտածեցիր, ամեն ինչին լավ հոգ տարար, բայց երբեք մտքովդ չանցկացրեցիր, թե մահ կա: Մոտ օրից անվերադարձ պիտի ճանապարհորդես մի աշխարհից դեպի անծանոթ մի այլ աշխարհ և մեկնում ես անպատրաստ, առանց պայուսակի, բոլորովին մերկ, դատարկ ձեռքերով և հոգով»:

«Չմտածեցի- պատասխանում է թագավորը,- մահը երբեք էլ տեղ չգրավեց մտքումս, ուրիշ շատ զբաղմունքներ ունեի, ափսոս, ժամանակ չունեցա նրա մասին մտածելու»:

Այն ժամանակ, ծաղրածուն պատյանից դուրս է հանում գավազանը և թագավորին տալով, ասում.

«Վերջապես գտա իմ արժանավոր հաջորդին: Հիմա քեզ եմ վերադարձնում այս գավազանը և անվանում քեզ «Հիմարների Հրամանատար»:

ԻՆՉՔԱՆ ՀՈՂԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՍ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀՈՂԸ ՀԱՐՈՒՍՏ Է ԵՎ ՕՐՀՆՎԱԾ: ՀԻՍՈՒՍ ԻՋԱՎ ԵՎ ՄՈՒՐՃՈՎ ՀԱՐՎԱԾԵՑ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀՈՂԸ: ԹՈՂ ՕՐՀՆՅԱԼ ԼԻՆԻ ՀԱՅԻ ՀՈՂԸ՝ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ, ԱՍԱՑ: ՄՆՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ ՏԵՐ ԿԱՆԳՆԵՆՔ ՄԵՐ ՕՐՀՆՅԱԼ ՀՈՂԻՆ:

«Եվ դուք մի՛ մտահոգվեք, թե ի՞նչ եք ուտելու կամ ի՞նչ եք խմելու, և մի՛ մտատանջվեք, որովհետև այդ ամենը աշխարհի հեթանոսներն են, որ փնտրում են: Իսկ ձեր Հայրը գիտե, որ այդ ամենը պետք է ձեզ: Այլ դուք հետամո՛ւտ եղեք Աստծու արքայությանը, և այդ ամենը ավելիով կտրվի ձեզ» (Ղուկ. 12:29-31):

Հողի սեփականատեր դառնալու համար մարդկանց թափած քրտինքը իրապես հիացնում է: Նրանցից շատերը անպայման տուն կառուցելու համար չէ որ ձեռք են բերում այն, այլ պարզապես ունենալու համար, որովհետև՝ *«հողը հարստություն է»,*- պատճառաբանում են նրանք:

Երկրներ կան, որոնք լավ գիտեն իրենց հողի գինը և թույլ չեն տալիս մի թիզ հող անգամ երկրից դուրս հանելու: Այսպիսի մի պատմություն է տեղի ունեցել մի մարդու հետ, որը տուն վերադարձի ճանապարհին, այդ երկրից հազվագյուտ ծաղիկի մի տեսակ է տանելիս լինում՝ թաղարով միասին: Սահմանապահ զինվորը ասում է, թե նրա մեջ մի բուռ հող կա և ինքը չի կարող թույլ տալ, որ այդ հողը իր երկրից դուրս գա: Ոմանք կարող են մտածել, թե սա չափազանցություն է, ի՞նչ պիտի լիներ մի բուռ հող դուրս տանելով, սակայն սահմանապահ զինվորը սկզբունքային լինելով, հայրենասիրության մի վառ օրինակ է դրսևորում:

Մարդը ստիպված թաղարով ծաղիկը ամբողջությամբ հանձնում է սահմանապահին:

Ճիշտ է այս արտահայտությունը. *«հողը ուժ է տալիս»:* Դրա վառ օրինակը մենք ունենք հայոց պատմությունից, երբ Արշակ թագավորը ներկայանում է պարսից արքային, որը պատվիրել էր Հայաստանից հող բերել ու փռել արքունիքի ճանապարհին, ստուգելու համար հողի ուժը: Արդեն դուք գիտեք, թե ի՞նչ պատահեց, երբ Արշակ թագավորը զրուցելով հասնում էր հայրենի հողին, առյուծ էր դառնում և նույնիսկ սպառնում պարսից արքայից արքային: Պարսկական հողի վրա նա դառնում էր հանդարտ ու խնդրողի դերում էր հանդես գալիս: Ահա թե ինչքան մեծ է հողի ուժը:

Կա նաև սրա հակառակ արտահայտությունը, որը դրական չէ, այլ՝ բացասական. *«հողին հավասարեցնել», «հողի վերածել»,* իսկ ագահ մարդկանց համար էլ ասվում է. *«Այդ մարդուն միայն հողը կշտկի»:*

Այս պատմությունը երկու գյուղացիների մասին է·

Մի թագավոր հանդիպում է երկու գյուղացիների, որոնք իրար հետ վիճում էին հողատարածքների համար: Նրանցից մեկը ուզում էր մի թիզ ավել վերցնել մյուս գյուղացու հողից: Թագավորը տեսնելով այդ, զայրանում է և ագահ գյուղացուն խոստանում է տալ այնքան տարածություն, ինչքան որ նա կարողանա քայլելով անցնել մեկ օրվա ընթացքում, սակայն պայման է դնում, թե ուր որ նա հոգներ ու կանգներ, այնտեղ պիտի լիներ նրա սահմանը: Գյուղացին ուրախությամբ սկսում է իր ճանապարհը: Հազիվ մի քանի ժամ քայլում է, արդեն հոգնում է, սակայն կանգ չի առնում: Օրը մթնում է, բայց նա դեռ քայլում է իր

վերջին ուժերը հավաքած և հևիհև դեռ շարունակում իր ճանապարհը, առանց դադար առնելու: Ի վերջո ընկնում է գետին և հավիտենապես փակում իր աչքերը, առանց վայելելու այն լայն տարածությունը, որը իբրև պարգև պիտի ստանար թագավորից: Գյուղացիները գալով նրա հասակի չափով փորում են հողը, ուր որ նա ընկել էր ու այնտեղ էլ թաղում:

«Ահա թե ինչքան հողի կարիք ունես»: Հիսուս մեզ զգուշացնում է ագահությունից: Աստծու խոսքն է ուղղված ագահին. *«Անմի՛տ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու»:* Եվ Հիսուս վերջացնում է իր այս խոսքը, ասելով. *«Նույնպես է նաև նա, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա» (Ղուկ. 12:20-21)*:

ՀԱՅՐ ԱՆՏՈՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ

Անտոնը պատմել է, թե ինչպես մի անգամ իր մոտ է եկել անապատական միայնակյացներից մեկը և արտասուքով պատմել հետևյալը. *«Ես մի աշխարհական եղբայր ունեի, որ մեռնելուց հետո որբ թողեց երեքամյա մի մանկան։ Վերցնելով մանկանը՝ տարա անապատ և դաստիարակեցի միայնակյացի վարքով՝ սնուցանելով նրան արմատով ու վայրի բանջարով։ Նա աշխարհիկ որևէ բան չտեսավ՝ ո՛չ կնոջ կերպարանք, ո՛չ միս, ո՛չ ձուկ, ո՛չ հաց կամ գինի, քանզի այս ամենից հեռու պահեցի նրան և տղայական հասակից պահեցողության սովորեցրի։ Այսպիսի ճգնություններով նա արբունքի տարիքի հասավ և վարժվեց բոլոր առաքինությունների մեջ, պահեցողությամբ ու հարաժամ աղոթքներով ապրեց անբիծ, սուրբ ու անարատ վարքով։ Երբեք չիջավ լեռից։ Չտեսավ ո՛չ գյուղ, ո՛չ քաղաք, ո՛չ էլ ճանաչեց երկրավոր գործերը՝ բարի կամ չար։ Տասնութ տարի ապրեց այսպես՝ ճգնելով և անապատական վարքով Տիրոջը ծառայելով։ Մի օր էլ հիվանդացավ ու վախճանվեց։ Ես սաղմոսներով, օրհնություններով ու արտասուքով թաղեցի անբիծ կրոնավոր եղբորորդուս և ուրախ էի նրա՝ սրբությամբ ու ճգնությամբ հանդերձյալ կյանք գնալու համար։ Բայց չգիտեի նրա սրտի բարձրամբտության և ամբարտավանության մասին, քանզի եղբայրների մեջ չապրեց, որտեղ խոսքերից ու գործերից կերևար նրա՝ ամբարտավան կամ հեզ ու խոնարհ լինելը։*

Եվ Աստծուն աղաչեցի ցույց տալ ինձ, թե եղբորորդիս սրբերի ո՞ր դասում դասվեց։ Երեք օր անց երազում մի նսեմ ու ժանտահոտ տեղ տեսա և այնտեղ՝ իմ եղբորորդուն։ Այս տեսնելով՝ հույժ տրտմեցի, վշտացա և սկսեցի մեղադրել Աստծուն. «Մի՞թե այն երիտասարդն անբիծ ու

անարատ չէր, մի՞թե գիշեր-ցերեկ Քեզ չէր ծառայում պահեցողությամբ, աղոթքով ու տքնությամբ: Եվ ինչպե՞ս տեսա նրան»: Մինչդեռ այսպես խորհում էի, հայտնվեց ինձ Տիրոջ հրեշտակը և ասաց. «*Ճգնության ամբողջ կարգը սովորեցրիր նրան, բայց խոնարհություն և հեզություն ինչո՞ւ չսովորեցրիր: Նա սրտում մեծ հպարտություն ուներ, ամբարտավան էր, իրեն սուրբ և Աստծո ընտրյալ ծառա էր համարում, իբրև թե իրենից բացի ուրիշ մեկը չկա: Մի՞թե չգիտես, որ Աստված ամբարտավաններին հակառակ է, և ամեն բարձրամիտ պիղծ է Տիրոջ առաջ»:*

«*Իսկ խոնարհներն ու հեզերն առանց մյուս առաքինությունների էլ կարող են հաճո և սիրելի լինել Տիրոջը, քանզի Տերն ո՞ւմ մեջ է բնակվում, եթե ոչ՝ հեզերի և խոնարհների և նրանց, ովքեր դողում են Նրա խոսքերից: Արդ, իմացի՛ր, որ Աստված անիրավ չէ, և որ բարձրամիտ ու հպարտ մարդը, եթե բյուր առաքինություններ էլ ունենա, պիղծ է Տիրոջ առաջ, ինչպես քո սնուցած որդին: Եթե դու այդ բանն իմանայիր և չխրատեիր, քեզ ևս քո մեղքերը չէին ներվի, բայց քանի որ չես իմացել նրա սրտում եղածը, հոգաբարձու չես եղել: Արդ, այսուհետև, եթե ձեզ հնազանդվողներին բոլոր առաքինություններից առաջ հնազանդության ու խոնարհության չվարժեցնեք, անպատիժ չեք մնա»:* Այս ասելով՝ հրեշտակը գնաց: Իսկ ես, ո՛վ պատվական հայր, այս ամենը տեսնելով ու լսելով, հարաժամ սգում եմ երիտասարդի կորուստը»:

Հայր Անտոնը պատասխանեց նրան. «*Հիրավի, ո՛վ եղբայր, ում մեջ ամբարտավանություն կա, նա Աստծունը չէ և չի տեսնի Նրան»:*

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Պիտի հասկանանք ու գիտակցենք, թե կյանքի երջանկությունների աղբյուրը կամ նույնիսկ բանալին՝ համբերությունն է: *«Ձեզ համբերություն է պետք, որպեսզի Աստծու կամքը կատարելով, հասնեք նրա խոստմանը… »* (Եբր. 10:36-37):

Ի՞նչ է համբերությունը: Արդյոք հնարավո՞ր է համբերել կյանքում և թե ինչպե՞ս պիտի համբերենք; Հարցեր են, որոնք միշտ էլ հետաքրքրել են բոլորին:

Մատթեոսի ավետարանից մեջբերված Հիսուսի խոսքերը թող լինեն այս բոլոր հարցերի պատասխանները. *«Ահա ես ձեզ ուղարկում եմ որպես ոչխարներ՝ գայլերի մեջ: Այսուհետև խորագե՛տ եղեք օձերի պես և միամի՛տ աղավնիների նման: Զգուշացե՛ք մարդկանցից, որովհետև պիտի մատնեն ձեզ ատյանների և պիտի տանջեն ձեզ իրենց ժողովարաններում… Բայց երբ ձեզ մատնեն, հոգ մի՛ արեք, թե ինչպես կամ ինչ պիտի խոսեք, որովհետև այդ ժամին ձեզ կտրվի այն, ինչ պիտի խոսեք, քանի որ ոչ թե դուք եք, որ պիտի խոսեք, այլ ձեր Հոր Հոգին… Եվ իմ անվան համար բոլորից պիտի ատվեք. ԻՍԿ ՈՎ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ ՀԱՄԲԵՐԻ, ՆԱ ՊԻՏԻ ԱՊՐԻ» (Մատթ. 10:16-22):*

Ի՞նչ է փոխվել երկու հազար տարիներ հետո: Կարծեք թե ոչինչ: Նույն մարդիկ են, նույն հալածանքները ճշմարտությունը խոսողների դեմ, նույն ատելությունը, նույն նախանձը, ագահությունը և այլն: Սատանան՝ փորձիչը, չի դադարել երեկ և չի դադարում այսօր մեզ իր թակարդի մեջ գցելուց ու հաճախ պիտի երևա ոչ թե որպես չար ոգի, այլ իբրև բարի հրեշտակ կամ արդար մարդ, շփոթի մատնելու մեր միտքն ու շեղելու մեզ ճշմարիտ

ճանապարհից: Աստված երբեմն թողնում է, որ չարը մեզ փորձության ենթարկի՝ ստուգելու համար մեր հավատն ու նվիրվածությունն Իրեն: *Սրա լավագույն օրինակը Հին Կտակարանից Հոբ Երանելու կյանքն է (Հոբ 1:10-12):* Հոբի նման մենք էլ պետք է համբերող լինենք ու Աստծուն հավատարիմ մնանք և փառք տանք Նրան թե' ուրախության, թե' տխրության, թե' հարստության և թե' աղքատության ժամանակ:

Ձեր ուշադրությանն եմ ցանկանում հանձնել այս ուսանելի պատմությունը.

Մի թագավոր կռվի է բռնվում իր թշնամիների դեմ: Առջևում մեծ բանակ տեսնելով՝ թողնում է իր զորքն ու փախչում: Վախից կանգնում է մի ժայռի մոտ՝ շունչ առնելու. տեսնում է մրջյուններին և մտածմունքի մեջ ընկած՝ հետաքրքրությամբ դիտում, թե նրանք ինչպես են շարժվում: Տեսնում է, որ մի մրջյուն իրենից մեծ ուտելիք է տանում: Քանի, քանի անգամներ մրջյունը վերցնում է ուտելիքը, փորձում տանել, սակայն չի կարողանում, ընկնում է, նորից է բարձրանում և այսպես շարունակ: Թագավորը զարմանում է մրջյունի համբերության ու աշխատասիրության վրա և հետաքրքրությամբ նայում է, թե վերջը ինչ է լինելու: Վերջապես մրջյունը կարողանում է իր ուտելիքը տանել այն բարձր տեղը, ուր նպատակ էր դրել:

Այս տեսնելով՝ թագավորն անմիջապես նստում է ձին ու գնում ետ՝ դեպի պատերազմի դաշտ: Զինվորները, որոնք իրենց թագավորի բացակայության պատճառով արդեն սկսել էին թուլանալ թշնամու զորքերի ճնշման տակ, ուրախանում են, երբ տեսնում են, որ նա գալիս է: Նրանց հարցին, թե թագավորն ո'ւր էր գնացել, նա պատասխանում է, թե՝ նոր զորք բերելու, որը քիչ հետո պիտի

միանա իրենց; Այս խոսքերով քաջալերելով իր զինվորներին՝ նա նոր թափով անցնում է հարձակման և հասնում հաղթանակի:

Աստծու ծրագիրը իրականացնելու համար ժամանակ ու համբերություն է պետք: Նրա ձեռքերը մաքուր ու ապահով են և երաշխավորում են մեր հանգիստը, խաղաղությունն ու կյանքը: Երբեք չկասկածենք: Մեր վստահությունն ու հավատը ժայռի նման ամուր ու անխախտ պահենք: Փորձենք փակված ու մութ վանդակում նույնիսկ մեր հոգու հավատի կանթեղը աղոթքով միշտ վառ պահել:

Եվս մի պատմություն, սակայն սա վանական կյանքից է, որը կարծում եմ կհետաքրքրի ձեզ.

Մի հավատավոր երիտասարդ, այցելում է անապատում ապրող ճգնավորին ու խնդրում, որ իրեն աշակերտ ընդունի:

Երիտասարդը ծերունի ճգնավորին դուր է գալիս, բայց ընդունելու համար մի քանի պայմաններ է դնում: Նա առաջարկում է, որ իր խրճիթի մուտքին դրված պղնձե արձանը գետին գլորի: Երբ հրամանը կատարվում է, ծերունին հարցնում է, թե՝ *«Այդ արձանը ցած ընկնելիս որևէ բողոք հայտնե՞ց կամ դիմադրե՞ց:» Երիտասարդն ասում է՝ «ո՛չ»: Այս անգամ սուրբը նրան մի մուրճ է տալիս ու ասում.*

«Ուժեղ խփիր այս արձանին և գոռա նրա վրա»:

Երիտասարդը կատարում է նրա հրամանը; Ճգնավորը հարցնում է, թե՝ *«Արձանը անհամբերության կամ բարկության նշաններ ցույց տվե՞ց, թե՝ ոչ»:*

«Ո՛չ»,- պատասխանում է երիտասարդը:

«Զավա՛կս, եթե կարողանաս այս արձանի պես համբերություն ունենալ, ինձ աշակերտ կդարձնեմ: Եթե չես կարող քո մեջ սպանել զգացմունքներդ, ուրեմն հարմար մեկը չես այսպիսի կյանքի համար, որն անտրտունջ աշխատանք, զոհաբերություն, սեր և համբերություն է պահանջում»:

Աշխարհը պատկանում է համբերողին: Մեր ամենադժվար պահին հիշենք աշխատասեր ու համբերությամբ լի մրջյունին՝ Աստծու կողմից ստեղծված այդ փոքրիկ միջատին, և օրինակ վերցնենք նրանից, ինչպես թագավորը, որը հասավ հաղթանակի: Վստահ եղեք, որ համբերությամբ մենք էլ կհասնենք մեր նպատակին, եթե այն աստվածահաճո է:

«Եվ Հիսուս նայեց ու տեսավ, մեծահարուստներին, որոնք տաճարի գանձանակի մեջ իրենց նվերներն էին գցում: Տեսավ և մի աղքատ այրի կնոջ, որ երկու լումա գցեց այնտեղ: Եվ ասաց. <Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ աղքատ այրին ավելի գցեց, քան բոլորը: Նրանք ամենքը իրենց կուտակածներից գցեցին Աստծուն տրված նվերների մեջ, իսկ նա իր կարոտության մեջ իր ունեցած ամբողջ ապրուստը գցեց» (Ղուկ. 21:1-4):

Այնուհետև Ղուկաս ավետարանիչը 18-րդ գլխի 18-27 համարներում խոսում է *«Հարուստ իշխանավորի»* մասին, ուր իշխանավորը Հիսուսին հարցնում է Երկնքի Արքայություն տանող ճանապարհի և նրան հասնելու մասին: Հիսուս հորդորում է նրան պահել պատվիրանները, սակայն նա պատասխանում է, թե մանկությունից արդեն իսկ դրանք կատարել է: Մեր Տերը նրան խրատում է, որ վաճառի իր հարստությունը, բաժանի աղքատներին ու գնա Իր ետևից: Հարուստը տրտմում է, որովհետև շատ հարստություն ուներ:

Հիսուս տեսնելով նրա տրտմությունը, ասում է. *«Ինչքան դժվարությամբ Աստծու արքայությունը կմտնեն նրանք, որոնք հարստություն ունեն: Ավելի հեշտ է, որ պարանը ասեղի ծակից անցնի, քան թե մի մեծահարուստ Աստծու արքայությունը մտնի: Եվ նրանք, որ լսեցին, ասացին. «Իսկ ո՞վ կարող է փրկվել»: Եվ նա ասաց. «Ինչ որ անհնար է մարդկանց համար, Աստծու համար հնարավոր է» (Ղուկ. 18:24-27):*

Այս պատմությունը հետաքրքիր է·

ԻՇԽԱՆՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Իշխանական ժամանակներում ապրում էր մի իշխան: Մի օր նա ցանկանում է բարի գործ կատարել և հիշատակ թողնել ու մտածում է եկեղեցի կառուցել: Այս հարցով նա դիմում է ում որ հարկն է և ստանում եկեղեցի կառուցելու համաձայնությունը: Վստահ եմ, ովքեր ծանոթ են այն ժամանակներին, գիտեն, որ այսօրվա պես ժամանակակից սարքավորումներ չկային եկեղեցի կառուցելու համար, ամեն ինչ կատարվում էր ձեռքով, մարդկանց միջոցով, կովերով լծված սայլերով, որոնք ավազ, շաղախ (ցեմենտ) և զանազան շինանյութեր էին բերում: Անցնում են տարիներ և Աստծու կամքով եկեղեցին կառուցվում է: Եկեղեցու ճակատին մեծ տառերով գրվում է իշխան-բարերարի անունը և նա նշանակված օրը, իր շքախմբով, հեծած արաբական ձիերին, մոտենում է եկեղեցուն, որպեսզի մասնակցի նրա օծման արարողությանը՝ ինչպես ընդունված է եկեղեցական կարգ ու կանոնով: Եվ հանկարծ հրաշք…եկեղեցու ճակատին գրված նրա անունը փոխվում է ու գրվում մի պարզ մայրիկի անուն՝ Հռիփսիմե Քաղցրիկյան:

Պատկերացնում եք այդ պահը: Ընտիր նժույգավարների մի շքախումբ իշխան-բարերարի առաջնորդությամբ և … Իշխանը՝ բնական է, սաստիկ բարկանում է: Ստիպված օրը փոխում են ու նշանակում մի այլ օր օծումը կատարելու համար: Նշանակված օրը իշխան-բարերարը առաջին անգամվա նման նույնպես հանդիսավոր ու շքեղ զարդարված գալիս է եկեղեցի: Եվ … կրկնվում է նույն պատկերը. նրա անունը փոխվում է ու գրվում այդ պարզ

մայրիկի անունը: Իհարկե իշխանը նորից սաստիկ զայրանում է, փրփրում, չի իմանում իր անելիքը, սակայն մի քիչ հանգստանալուց հետո, մտածում է գտնել այդ մայրիկին, իմանալու համար, թե նա ի՞նչ է արել, որ իրենից ավելի արժեք ունի և նրա անունն է գրվում իր անվան փոխարեն: Գնում են ու գտնում այդ տարիքն առած, կյանքի ամբողջ ծանրությունն ու բեռը իր ուսերին հավաքած, կքած տարեց մայրիկին: Իշխան-բարերարը մոտենում է ու հարցնում.

«Մայրիկ դու ինձ ճանաչո՞ւմ ես, ո՞վ եմ ես»:

«Ոչ»,- ասում է նա:

«Ես այս շրջանի մեծահարուստ իշխանն եմ»:

«Լավ» :

«Դու գիտես, որ այս եկեղեցին իմ տված նվիրատվությամբ է կառուցվել»:

«Լսել եմ, Աստված քեզ երկար կյանք պարգևի»:

«Շնորհակալ եմ, բայց մի բանի վրա եմ զարմանում, ինչո՞ւ է եկեղեցու ճակատին գրված իմ անունը ջնջվում ու քո անունը գրվում, դու ի՞նչ ես արել»:

«Ե՞ս, ոչինչ, - զարմանում է մայրիկը ու շարունակում անմեղորեն,- միայն թե, երբ եկեղեցու կառուցման համար սայլերով ավազ, շաղախ և շինանյութ էին բերում, հոգնած կովերին ջուր ու խոտ եմ տվել, մինչև որ եկեղեցին կառուցվեց: Այսքան»:

Իշխան-բարերարն այլևս ոչինչ չի ասում, իր համար պարզ էր ամեն ինչ: Նա այլևս չի վերադառնում

եկեղեցի, օծմանը մասնակցելու համար, հասկանալով, որ Աստված այդ համեստ մայրիկի կատարածը ավելի ընդունելի է համարել, քան իր այդքան գումարի ներդրումը: «Թող եկեղեցին կոչվի Սուրբ Հռիփսիմե Կույսի անունով»,- ասում է Իշխան-բարերարը ու ետ վերադառնում տուն:

Բարի գործի համար այնքան էլ կարևոր չի մեծամեծ գործեր կատարել, փոքրիկ աննշան թվացող բարությունն էլ մեծ արժեք ունի ու կգնահատվի Ամենակարող Աստծու կողմից: Հիշենք նաև Ավետարանից *«այրի կնոջ լուման»:* Հռիփսիմե մայրիկի հույսը Աստված էր: Եկեք մենք էլ մեր հույսը դնենք Նրա վրա ու մեր խղճին հակառակ գործեր չկատարենք: Աստծու մոտ ավելի ընդունելի են սրտանց ու հավատով կատարված նույնիսկ փոքր, աննշան բարի գործերը: Նա չի նայում արտաքինին ու շքեղության, այլ՝ սրտին:

«ԲԱՅՑ ԱՐԴ, ՄՆՈՒՄ ԵՆ ՀԱՎԱՏ, ՀՈՒՅՍ, ՍԵՐ, ՍՐԱՆՔ՝ ԵՐԵՔԸ· ԵՎ ՍՐԱՆՑԻՑ ՄԵԾԱԳՈՒՅՆԸ ՍԵՐՆ Է» (Ա. ԿՈՐՆԹ. 13:13):

Միակ բանը, որ մենք կարող ենք վստահ հաստատել, դա՝ Հայր Աստծու ստեղծած պայմաններն են, որոնց մենք պարտավոր ենք ենթարկվել: Այսպես ասած, միակ դրական բանը, որ ՀՈՒՅՍԸ կարող է մեզ ներշնչել, այն է, որ մարդը պարտավոր է իմանալ այն Գերագույն Էակի մասին, Որն իրեն կյանք տվեց, Նա, որի անսահման բարությունը ավելի մեծ է, քան ինքը՝ կյանքը: Նա մեր Ստեղծիչն է, իսկ մենք՝ Իր արարածները:

Կյանքում ամեն անկում, ինչքան էլ հուսալքիչ լինի, ունի վերականգնման հույս:

ԺԱՄԿՈՉԸ

Լոնդոնի Եպիսկոպոսական Եկեղեցու ժամկոչը անգրագետ լինելու պատճառով, նորընտիր վարչության կողմից պաշտոնից ազատվում է իր քսանամյա ծառայությունից հետո:

Խեղճ մարդը սրտի ցավը բուժելու համար մի խանութ է մտնում, որ ծխախոտ գնի, բայց այդ փողոցի վրա ծխավաճառատուն չի գտնում: Տուն է գալիս ու պատմում կնոջը իր ցավը:

«Մի մտածիր դրա համար, երկուսս էլ ձեռք-ձեռքի կտանք, մի գործ կանենք և մեր ապրուստը կգտնենք»,- ասում է կինը:

«Լավ ասացիր, գիտե՞ս ինչ կարող ենք անել, արի այս մեծ պողոտայի վրա ծխախոտի մի խանութ բացենք,

հաջող մի գործ կարող է լինել, քանի որ ուրիշ ծխավաճառ չկա»:

Որոշումից անցնում են գործի և խանութը բացում են ու հաջողությամբ, մեկը մյուսի ետևից բազմաթիվ խանութների սեփականատերն են լինում:

Մի օր դրամատան տնօրենը կանչում է ժամկոչին ու ասում.

«Կարդացեք այս թուղթը և ստորագրեք. Ձեր դրամագլուխը հավելյալ տոկոս պիտի բերի ձեզ»:

«Բայց ես կարդալ չգիտեմ, կարող եմ միայն անունս ստորագրել»:

«Զարմանալի է, ինչպե՞ս կարող է լինել, երբ կարդալ չգիտեք, բայց այսքան մեծ հաջողության եք հասել: Իսկ եթե կարդալ իմանայիք, ի՞նչ պիտի լիներ ձեր դիրքը»:

«Դա շատ պարզ ու հստակ է, ԼՈՆԴՈՆԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԺԱՄԿՈՉԸ ՊԻՏԻ ԼԻՆԵԻ»:

«ՁԻԹԵՆՅԱՑ ԼԵՌԱՆ ՎՐԱ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄՈՏԵՑԱՆ ՆՐԱՆ ՈՒ ԱՍԱՑԻՆ՝ «ԱՍԱ ՄԵԶ, ԱՅԴ Ե՞ՐԲ ՊԻՏԻ ԼԻՆԻ, ԵՎ ԿԱՄ ՔՈ ԳԱԼՍՏՅԱՆ ՈՒ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԻ ՆՇԱՆՆ Ի՞ՆՉ ԿԼԻՆԻ» (ՄԱՏԹ. 24:3):

Հիսուս պատասխանեց ու ասաց նրանց. *«Զգո՛ւյշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի, որովհետև շատերը կգան իմ անունով ու կասեն, թե ես եմ Քրիստոսը և շատերին կմոլորեցնեն:… Եվ բազում սուտ մարգարեներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն: Եվ անօրենության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի» (Մատթ. 24:3-5, 11-12):*

Սրանք Հիսուսի խոսքերն են, որոնք ասվել են երկու հազար տարիներ առաջ, սակայն կարծես ճիշտ այսօրվա համար ասված լինեն: Այս խրատները յուրաքանչյուր քրիստոնյայի զգուշացում է, առավել ևս քրիստոնյա մեր փոքր ժողովրդի բոլոր զավակների համար ամենուր:

Այս պատմությունը դրա վառ վկան է: Կարդացե՛ք և դաս առեք:

ՔԱՀԱՆԱՅԻ ԴԱՍԸ ԱՄԲԱՐԻՇՏԻՆ

Ասում են, թե այս դեպքը իրականում եղել է:

Շատ տարիներ առաջ, երբ մարդիկ չէին պատկերացնում իրենց կյանքն առանց հավատի ու Եկեղեցու, երբ բոլոր վայրերի բնակիչներն ամեն Կիրակի միասնաբար մասնակցում էին Սուրբ Պատարագի արարողության, սկզբից մինչև վերջ, իր սովորական կյանքով ապրում էր նաև մի փոքրիկ գյուղակ:

Օրերից մի օր, գյուղացիները տեսնում են մի անծանոթ ճամփորդի, որն իր կառքով ուղեկիցների հետ միասին անցնում էր այդ շրջանով:

«Սպասեցե՛ք»,- ասում է նա կառապանին,- *«Ի՞նչ եք կարծում չարժէ՞ արդյոք կանգ առնել այս գեղեցիկ վայրում»:* Գյուղացիներից մի քանիսը տեսնելով նրանց, մոտ են գնում և ողջունում են: Հյուրը հարցնում է, թե արդյոք հնարավո՞ր է, որ ինքը իր ուղեկիցներով հանգստանա գյուղում և խոստանում է լավ վարձատրել;

Գյուղացիները պատասխանում են, որ հյուրը Աստծունն է և վճարելու կարիք չկա, որովհետև Սուրբ Գրքում գրված է, որ օտարին պետք է եղբորդ նման ընդունես:

Հյուրը ծիծաղում է նրանց վրա և դառնալով իր ուղեկիցներին. ասում է. *«Չէ, դուք տեսա՞ք, թե ինչպիսի առաքինասիրություն է, քիչ էր մնում արտասվեի հուզմունքից: Պատկերացնո՞ւմ եք, բանից պարզվում է այստեղ գործնականում իրականացվում են աստվածաշնչային դատարկաբանությունները»:* Նրա կողմնակիցները բոլորը ծիծաղում են և նա շարունակում է իր խոսքը.

«Լսեցեք բարեկամներս, այս օրը հավիտյան պիտի արձանագրվի ձեր հոգիներում, որովհետև դուք արժանացաք մեծագույն շնորհի, այսուհետև դուք էլ չեք մնա խավարամտության մեջ, քանի որ ես ձեզ ցույց կտամ, թե ինչպես է մտածում Եվրոպայի ամենաառաջադեմ միտքն ունեցող, ամենաիմաստուն մարդը, ես ձեզ «դարձի» կբերեմ: Բայց այդ ամենը վաղը, որովհետև մենք այսօր չափազանց հոգնած ենք և քաղցած, իսկ մինչ այդ մեզ քնելու տեղ հայթայթեք ու գնացեք ձեր Աստծուն վերջին անգամ փառք տալու, որովհետև Նրա ժամը հասել է: Հա, հա, հա…»;

Բնակիչները նրանց բավարարում են քնելու տեղով և ուտեստեղենով ու նրանք մինչև ուշ գիշեր լսում են գինովցած օտարների ծիծաղն ու զվարթ խոսակցությունը:

Հաջորդ օրը Կիրակի էր ու բոլոր գյուղացիները հավաքվում են, որպեսզի գնան հարևան գյուղը Պատարագի, քանի որ իրենց եկեղեցու քահանան մահացել էր, իսկ նոր մեկը դեռևս չէր եկել:

Հյուրը նախ շնորհակալություն է հայտնում հյուրասիրության համար, ապա, երբ իմանում է, որ նրանք Պատարագի պիտի գնան, սկսում է իր դասախոսությունը հարց ու պատասխանի ձևով:

«Դուք տեսնո՞ւմ եք վերևում եղող կապույտ երկինքը:

Այո:

Ես նույնպես տեսնում եմ, ուրեմն երկինքը գոյություն ունի՞, թե չունի:

Ունի:

Մի խոսքով հյուրը հարցնում է այս ձևով արևի, անտառի, ծառերի, ծաղիկների գոյության մասին:

Ապա ասում է.

Այս բոլորի մեջ դուք տեսնո՞ւմ եք Աստծուն:

Ոչ:

Ուրեմն, Աստված գոյություն չունի»:

Գյուղացիները և հյուրն իր ուղեկիցներով այսպես խոսելով հասնում են եկեղեցի և սկսվում է Սուրբ Պատարագը: Այս անգամ, սակայն քահանան սովորականից ուշ է դուրս գալիս Խորանից, քանի որ գյուղացիներից մեկը ցանկացել էր նրա հետ զրուցել մինչև Սուրբ Պատարագի սկսվելը:

Քարոզի ժամանակ ծերունազարդ քահանան դող-դոջուն ձայնով խոսում է օրվա ավետարանական ընթերցվածի մասին: Նա երբեմն կանգ էր առնում շունչ քաշելու, ուժ հավաքելու համար և այդ պահերին անկյունից քրքջոցներ էին լսվում: Իր եզրափակիչ պատգամը տալուց առաջ, Պատարագիչ քահանան ասում է.

«Իսկ այժմ, եղբայրներ և քույրեր, մի պահ շուռ եկեք և նայեք, դուք բոլորդ տեսնո՞ւմ եք այս մարդուն,- և իր հայացքը ուղղում է անծանոթ հյուրի կողմը:

«Այո»:

«Իսկ ձեզանից որևէ մեկը տեսնո՞ւմ է նրա գլխի մեջ եղած խելքը, իմաստությունը կամ պարզապես մտածելու կարողությո՞ւնը»:

«Ոչ», -միաբերան ասում են բոլորը:

«Ուրեմն»…

… «Նրա գլխում խելք գոյություն չունի»,- ուրախությամբ աղաղակում են հարևան գյուղից եկածները: …

ԻՐԱՊԵՍ ԿԱՐՈ՞Ղ ԵՆՔ ՆԵՐԵԼ

«Պետրոս առաքյալը մոտենում է Հիսուսին և խնդրում պարզել այս հարցը. «Տե՛ր, քանի՞ անգամ, եթե եղբայրս իմ դեմ մեղանչի, պետք է ներեմ նրան. մինչև յո՞թն անգամ»: Հիսուս պատասխանում է. «Քեզ չեմ ասում, թե մինչև յոթն անգամ, այլ մինչև յոթանասուն անգամ յոթը» (Մատթ. 18:21-22):

«Հայ՛ր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23:34):

Հիսուս ներեց Իրեն, չարչարողներին, տանջողներին, ապտակողներին, թքողներին ու խաչողներին: Իսկ մենք այդքան ուժ ունե՞նք, որ կարողանանք ներել մեր նմաններին: Դուք մի պահ այդ հարցը ձեզ տվեք ու փորձեք պատասխանել: Մինչ այդ կարդացեք Սմբատ Սարկավագի այս պատմությունը Ֆրանսիացի նշանավոր զորահրամանատար՝ Նապոլյոն Բոնապարտի մասին և կտեսնեք, թե նա ինչպիսի՞ մեծություն էր: Ահա այսպիսին պիտի լինի յուրաքանչյուր մարդ, եթե իրապես աստվածային պատկերը արժևորում է:

ՆԱՊՈԼՅՈՆ ԲՈՆԱՊԱՐՏԻ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Մի անգամ Նապոլեոն Բոնապարտը պահակախմբի ստուգման ընթացքում նկատում է քնած զինվորի՝ իր հերթապահությանը: Ռազմական կանոնադրության և օրենքների համաձայն՝ հերթապահը պետք է դատարանի առջև կանգներ, այնուհետև մահապատժի ենթարկվեր, քանզի չէր կարող ներում ստանալ այն զինվորը, ով անամոթաբար քնել էր հերթապահության ընթացքում՝ վտանգելով իր ընկերների կյանքը:

Սակայն զարմանալի մի բան է տեղի ունենում: Նապոլյոնն անսպասելի որոշում է կայացնում. բարձրացնելով քնած զինվորի զենքը՝ այն իր ուսին է գցում և զբաղեցնում նրա տեղը:

Որոշ ժամանակ անց գալիս է փոխարինող սերժանտը: Տեսնելով քնած զինակցին, այնուհետ կայսրին՝ կանգնած հերթապահության՝ զարմանքից քար է կտրում…

Ասում են՝ այս դեպքից հետո, որի մասին իմանում է ողջ զինվորական կազմը, զինվորը բացառիկ քաջությամբ և արիությամբ կանգնում է կայսեր կողքին՝ պատրաստ դուրս գալու յուրաքանչյուր մարտի ու մեռնելու նրա համար:

Աստված ներեց մեղավոր մարդուն և ուղարկեց Իր Միածին Որդուն, որ փրկի ամբողջ աշխարհին մեղքի տիրապետությունից: Ի՞նչ եղավ: Չհասկացան, խաչեցին ու թաղեցին: Մարդը իր մեղքի վրա, նորից մի մեղք ավելացրեց: Սակայն Հիսուս Հարություն առավ, նորից ներեց մարդուն և Իր Հարությամբ մեզ վերստին մոտեցրեց Ամենակարող Աստծուն; Մարդիկ, երախտամոռ մի՛ եղեք, դուք էլ ներեցեք:

ՆՄԱՆՎԵՑԵ'Ք ՄԵԾ ՄԱՐԴԿԱՆՑ

«Մի՛ վախեցիր, փոքրի՛կ հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց տալ ձեզ արքայությունը: Վաճառեցե՛ք ձեր ինչքերը և ողորմություն տվեք. և ձեզ համար շինեցե՛ք չհնացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ո՛չ գողն է մոտենում, և ո՛չ ցեցը՝ փչացնում. Որովհետև, ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Ղուկ. 12:32-34):

«Ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն», այսինքն՝ բարի, մաքուր և արդար կյանքով ապրեք ու լավ գործեր կատարեք, որպեսզի մշտապես հիշվեք մարդկանց մտքում, սրտում ու հոգում:

ԵՐԿՐԱՅԻՆ ԵՎ ԵՐԿՆԱՅԻՆ ԳԱՆՁԵՐ

…Աշխարհում շատ գանձեր կան, բայց ամենաթանկ գանձը ԼԱՎ ԱՆՈՒՆՆ է: Լավ անունով մարդը միաժամանակ ապրում է հազար ու մի տեղ, հազար ու մի մարդու սրտում: Լավ անունով մարդը այնպիսի տեղեր է հասնում, ուր չի կարելի հասնել ո՛չ ձիով, ո՛չ ուղտով և ո՛չ էլ ուրիշ ձևով: Լավ անունով մարդը չի մեռնում: Նա մահից հետո էլ անտեսանելի ապրում է մեր մեջ ինչպես ոգի: Միշտ մեր միտքն է գալիս, մեր սիրտն է հոսում իր գեղեցիկ հատկություններով; ԼԱՎ ԲԱՆ Է ԼԱՎ ԱՆՈՒՆԸ:

Մի գանձ էլ կա – ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ է:

Հարստությամբ մարդը հազար ձեռք է ունենում, հազար ոտք, հազար լեզու և հազար ձևով կարող է հազար լավ գործ կատարել: Լավ բան է հարստությունը:

Մի գանձ էլ կա – Դա էլ ԽԵԼՔՆ է:

Խելքով մարդը գերմարդ է դառնում: Խելքով տկարն ուժեղ է, աղքատը՝ հարուստ, վախկոտը՝ չվախեցող: Նրանից է, որ անլսելի շշնջյունով ասած խոսքը որոտում է ու անցնում աշխարհի մի ծայրից մյուսը; Լավ բան է ԽԵԼՔԸ:

Բայց մի գանձ էլ կա, որ <u>լավ անունից, հարստությունից և խելքից վեր է:</u> Առանց նրա այս բոլորը համարյա թե սարսափելի ու կործանարար կլինեին մարդու համար: Առանց նրա աշխարհը կթառամեր ու կամայանար: Այդ գանձը մարդու ԽԻՂՃՆ է:

Այս գանձերը արդեն մեծ մարդիկ են ունենում և սրա համար էլ նրանք ինչ որ էլ ունենան՝ երջանիկ են լինում; Ինչքան հարստություն մտքովդ կանցնի տուր նրանց, որ նրանք բաժանեն մարդկանց ու բարերարություն անեն, դարձյալ քիչ է նրանց համար…:

Նմանվեցեք մեծ մարդկանց:

ՃԳՆԱՎՈՐԸ ԵՎ ՈՒԺԵՂ ՄԱՐԴԸ

«Հիսուս ասում է. Ով որ բարձրացնում է իր անձը՝ կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը՝ կբարձրացվի» (Ղուկ. 18:14): «Խոնարհվիր, որպեսզի բարձրանաս». Սքանչելի նշանաբան է: Երբ մի ուրիշը քեզ բարձրացնում է, դու ավելի մեծ պատվի ես արժանանում, քան, երբ դու ինքդ քեզ ես փորձում բարձրացնել: Մեծության արժանի է այն մարդը, որը գիտի խոնարհ լինել:…

Պետրոս Առաքյալն ասում է. *«Խոնարհվեցե՛ք ուրեմն Աստծու հզոր ձեռքի տակ, որպեսզի Նա ձեզ բարձրացնի ժամանակին» (Ա. Պետրոս 5:6):* Խոնարհությունը առաքինություն է:

ՃԳՆԱՎՈՐԻ ՍԵՐԸ ՀԱՂԹԵՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻՆ

Կյանքը սովորական մի հարվածով կոտրել է անգամ ամենաուժեղներին և որքան էլ անհասկանալի ու չհիմնավորված է՝ ուժն է ծնել իրավունքը:

Այդ ժամանակներում ապրել է մի ուժեղ մարտիկ, որը երբեք չի պարտվել և միշտ, ամեն տեղ ցուցադրել է իր ուժը: Մի անգան նա լսում է, թե լեռներում ապրում է մի ճգնավոր, որից ավելի ուժեղ մարդ չկա աշխարհում: Զարմացած գնում է լեռները տեսնելու ճգնավորին: Մտնելով նրա կացարանը, նա զարմանքից քարանում է, երբ տեսնում է այդ ուժեղը մի նիհար ծերուկ է:

«Մարդիկ հաստատ չափազանցել են քո ուժը.- վստահ ասում է մարտիկը դիմելով ճգնավորին,- դու անգամ չես կարող տեղաշարժել քո կողքի քարը, իսկ ես կարող եմ այն բարձրացնել և մի կողմ նետել»: Ծերունին

նրան պատախսնում է, թե արտաքինը սովորաբար խաբուսիկ է լինում. «Դու գիտե՞ս, թե ես ով եմ և ով ես դու: Գիտեմ և գիտես, թե ինչի համար ես այստեղ: Իմացիր, ամեն առավոտ ես ձորից մի մեծ քար եմ բերում, որը ջարդում եմ գլխով և ձորը գլորում: Այսօր դեռ չեմ ջարդել: Ուզո՞ւմ ես մարտնչել ինձ հետ: Չեմ ընդունում մարտահրավերդ այնքան ժամանակ, քանի դեռ այդ հասարակ բանը չես կարող անել»:

Մարտիկը համաձայնվում է և, երբ քարը բերում են ամբողջ ուժով գլուխը քարին է խփում և կիսամեռ ընկնում է: Ճգնավորը նրան մի կերպ բուժում է և հետո երկար տարիներ սովորեցնում նրան խելքով, բանականությամբ ու հավատով հաղթել:

Այս պատմությունը ընթերցելիս ակամա հիշում ենք մեր անմահ բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի այս խոսքը. *«Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր»:* Ասվում է նաև, թե մարդու գլուխը պատեպատ խփելիս, դրանից պատերին ոչինչ չի լինում, բայց մարդը ուղեղի ցնցում է ստանում: Այս երկուսի օրինակները ունենալով, ընդունում ենք, որ ամենակարևորն այն է, թե ուժը ֆիզիկական մարմնի մեջ ժամանակավոր է, իսկ ծեր ու նիհար լինելը դեռ չի նշանակում թույլ և տկար լինել, ինչպես եղավ ճգնավորի պարագային:

Ֆրանսիացի նշանավոր հրամանատար Նապոլյոն Բոնապարտը ասել է. *«Մենք կայսրություններ հիմնեցինք բռնի ուժով, որոնք կործանվեցին, իսկ ժամանակներ առաջ Հիսուս Իր կայսրությունը հիմնեց սիրով, որը հավիտյանս շարունակում է»: Այո՛, սերն է միշտ հաղթում, դրա համար էլ Հիսուս ասաց, որ ձեզ մի նոր պատվիրան եմ տալիս.*

«Սիրեցե՛ք միմյանց»: Մարդիկ ձեզ այս սերն է պակասում, սիրե՛ք իրար և հավիտյանս կապրեք:

«Իսկ արդ, դու, որ ուսուցանում ես ընկերոջդ, ինքդ քեզ չես ուսուցանում· քարոզում ես չգողանալ, գողանում ես, ասում ես՝ չշնանալ, շնանում ես· գարշում ես մեհյաններից, տաճարներն ես կողոպտում, օրենքով պարծենում ես՝ օրենքը խախտելով Աստծուն ես անարգում···» (Հռոմ· 2:2-24),- ասում է Պողոս Առաքյալը Հռոմայեցիներին ուղղած իր թղթում:

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏ 12-ՐԴ ԴԱՐ

Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետին մի մարդ է մոտենում ու նրան հանձնում իր բողոքագիրը: Այդ ինքնահավան մարդը բողոքագրում քննադատում էր Շնորհալի Հայրապետին ու խստորեն թվում մի շարք կարծեցյալ մեղքեր, սխալներ ու բացթողումներ, որոնք արել էր Կաթողիկոսը: Հայրապետը կարդում է գիրը և արցունքոտված աչքերով, խիստ տոնով ասում է.

«Զավակս, ավաղ, դու միայն մեղքերիս և թերություններիս կեսն ես հիշել, եթե հարցնեիր ինձ, ավելին պիտի ասեի»:

Անգլիացի գրագետ Օսքար Ուայլտը, որն իր ժամանակին բանտարկության էր դատապարտվել անբարոյական վարքի ամբաստանությամբ, իր մի գրքում խոստովանվում է, թե՝ *«Այն ինչ որ արել ես ծածուկ ու աչքից պահված մթան մեջ, մի օր ստիպված ես գոռալու տանիքներից»:*

Մի՛ դատապարտիր ուրիշին այն բանի համար ինչը դու ևս գործում ես: Պողոս առաքյալը զգուշացնում է, *«Եվ դուք, գոնե ոմանք, այդպիսիք էիք, բայց լվացվեցիք, մաքրվեցիք, արդարացվեցիք մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով և մեր Աստծու Հոգով» (Ա. Կորնթ. 6:11):*

«Քար մի՛ նետիր ուրիշի ապակյա պատուհանին, երբ քո տունը ամբողջովին ապակուց է կառուցված»: Իմաստուն խոսք է սա իրապես: Ինչպե՞ս կարող ես դատապարտել մի մարդու այն բանի համար, որից դու էլ զերծ չես:

Պարկեշտ ու առաքինի մարդիկ իրենց մեղքերը լավ գիտեն ու մշտապես ապրում են ճշմարիտ զղջումի և ապաշխարանքի մեջ: Միայն կույրերն ու կեղծավորներն են, որոնք իրենց աչքի գերանը մոռացած՝ ուրիշի աչքում շյուղ են փնտրում:

«ԵՐԱՆԻ ՍԳԱՎՈՐՆԵՐԻՆ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆՐԱՆՔ ՊԻՏԻ ՄԽԻԹԱՐՎԵՆ» (ՄԱՏԹ. 5:4):

Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետը ասում է. *«Ինչքան ժամանակ որ մարդը մեղքի մեջ է, չի կարող հեշտությամբ սգալ»:* Սուգը, ըստ նրա մարդու մեջ այն վիճակն է, որով զգում ու ապրում իր մեղավորությունը: *«Կույրը, որն արևը չի տեսնում, երբ մութ բանտում նստի, չի զգա լույսից իր զրկվածությունը, մինչդեռ նա, որ տեսել է արևի գեղեցկությունը, զրկվի նրանից, գիտի թե ի՞նչ բան է զրկված լինելը»:* Սգավոր ենք այսօր բոլորս, որովհետև մահամերձ է մեր հավատը: Շատերը նույնիսկ այն կորցրեցին: Հավատը անսպառելի գանձն է հայ քրիստոնյա ժողովրդի համար, որը այդ հրաշալի ուժով կառուցեց իր տունը, գրկեց ու փայփայեց նրան:

Այս պատմությունը կհետաքրքրի ձեզ և վստահ եմ ուսանելի է:

ՎՇՏԱԿԻՑ ԴԱՌՆԱԼ ՍԳԱՎՈՐԻՆ

Մի կին կորցնում է իր սիրելի ամուսնուն և երկար ժամանակ չի կարողանում մխիթարվել ու հաշտվել ծանր կորստի հետ: Այնքան սգի ու տրտմության մէջ է ընկնում, որ նույնիսկ մոռանում է իր զավակներին, տուն ու տեղ: Երեխաները քաղցած են մնում, մի կտոր հացի կարոտ և արտը երեսի վրա թողնված ու անմշակ: Հարազատների, հարևանների, ընկերների և ոչ մեկի մխիթարիչ խոսքը չի ազդում կնոջ վրա, որը չէր ուզում մոռացության տալ վիշտը, չէր սփոփվում ու վերադառնում իր զավակների մոտ՝ տուն:

Մի օր, գերեզմանատան մոտից մի օտարական է անցնում, տեսնելով այրի կնոջը ամուսնու գերեզմանի մոտ

նստած, որտեղից մեկ տարի առաջ էր հեռացել, մոտենում է նրան ու լսելով սգավորի սաստիկ լացը, նստում է մի քարի վրա ու ինքն էլ ազդվելով, դառը արցունք է թափում: Կինը բարձրացնելով գլուխը, տեսնում է ահա իր հետ ՄԻ ՎՇՏԱԿԻՑ ԲԱՐԵԿԱՄԻ, ոտքի է կանգնում, սրբում արցունքները ու վերադառնում է իր տունը: Նա փոխում է սգի հագուստները, լվացվում ու հավաքելով իր զավակներին սկսում է իր ընտանեկան կյանքի մասին մտածել ու տան կարիքները հոգալ:

Այստեղ հարց է ծագում. թե՝ *«Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ հանկարծ կինը սթափվեց ու հասկացավ, որ պիտի ապրի»* կամ *«Ի՞նչ էր անհրաժեշտ այս կնոջը»:* Պատասխան – ՍՐՏԱԿԻՑ ՈՒ ՎՇՏԱԿԻՑ ՄԵԿԸ և ուրիշ ոչինչ: Օտարականը չխոսեց, չխրատեց, այլ միայն վշտակից եղավ: Եվ սա բավարար էր, որպեսզի կինը մխիթարվեր:

Մենք էլ բոլորս սգի մեջ փնտրենք անկեղծություն, վշտից՝ կենդանի խոսք և վերաբերմունք: Երբ կարողանանք այս զգալ, այն ժամանակ թեթևությամբ պիտի կրենք մեր սգի ցավերը:

«Մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող, այլ դուք առավել վախեցեք նրանցից, ով կարող է գեհենի մէջ կորստյան մատնել հոգին և մարմինը» (Մատթ. 10:28):

Այսօր դժբախտաբար աշխարհը իրական սգի մեջ է, որովհետև՝

ա. Հավատը թուլացել է.

բ. Հույսը հուսահատության է փոխարինվել.

գ. Սերը դարձել է պղնձյա շեփոր, հնչյուն և ղողանջ.

դ. Սրբության երանական վիճակը տեղի է տվել մեղքի առջև:

ՄԻ' ՏՐՏՆՋԱ, ԱՅԼ ՀՈՒՅՍ ՈՒՆԵՑԻՐ

Ապրում ենք այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ մեր շուրջը մարդիկ կամա թե ակամա բողոքում են ու դժգոհում դժվարություններից և նեղություններից: Ժողովրդական հայտնի ասացվածք կա. *«Աստված ցավը, նեղությունը, դժվարությունը քարին տվեց, չտարավ, բայց մարդը՝ դիմացավ»:*

Իբրև Աստծուն սիրող և փառաբանող մարդիկ, չտրտնջանք ու չդժգոհենք մեր կյանքից, այլ հույսով լի կրենք մեր խաչը և այնպես ապրենք ինչպես Նա' է մեզ պատվիրել ու կտեսնենք, թե ինչպես աստվածային օրհնությունը և սերը լցվում են մեր սրտերից ու մեր ընտանեկան հարկերից ներս:

Ահա այսպիսի համբերությամբ 59 համարը կրող ծերունին հասավ իր ընտանիքին:

Պատմությունը այս է.

59 ՀԱՄԱՐԸ ԿԱՄ ՑՆՑՈՂ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Պատմում է մի Տիկին, որը Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին ապրում էր Սուրաբայա քաղաքում *(Սուրաբայա քաղաքը Արևելյան Ջավա նահանգի մայրաքաղաքն է (Ինդոնեզիայում):* Կառուցվել է 1923թ. կոչվում է նաև Հերոսների քաղաք, ունի երեք միլիոն բնակչություն) և պատերազմի պատճառած բարդությունների հետևանքով նրա ընտանիքը ենթարկվել է որոշակի դաժան փորձությունների: Ինչպես շատերի հայրերը և տղամարդիկ, նրա հայրը ևս այդ տարիներին գերի է տարվում ու հինգ տարիներ կապը խզվում է ընտանիքի միջև:

Դուստրը, որը հոր գերության տարվելու տարին միայն տասներկու տարեկան էր, երբ դառնում է տասնյոթ տարեկան, հանձն է առնում կամավոր ծառայություններ կատարել իր քաղաքում: Իրեն բաժին է ընկնում երբեմն խումբ-խումբ դեպի տուն վերադարձող գերիների հաշվարկը: Մի օր, իր պարտականությունը կատարած լինելու ժամանակ հոգեկան յուրովի բավարարության ցնցող մի փորձառություն է ունենում:

Այսպես, սայլը կանգնում է և նա սկսում է հաշվել իջնող գերիներին: Հաշիվը անելու ժամանակ նա աջ ձեռքով թեթևակի դիպչում է յուրաքանչյուրի ուսին՝ տալով նրանցից ամեն մեկի թիվը: Սովորականի պես հաշվառում է նաև 59 համարը կրող ծերունուն, որը, գլուխը կախ ու տառապանքի ահավոր ծանրությունը իր սրտում, քայլում է դեպի առաջ:

Ու հրաշք, այդ պահին երիտասարդ աղջիկը նրա քայլած ժամանակ զգում է հինգ տարիներ առաջ իրենց տնից բռնի գերի տարված, իր հոր քայլերի յուրահատուկ ռիթմը և պոռթկումով հայրիկ, հայրիկ ասելով նրան ընդառաջ է վազում: Երկուսի հայացքները հանդիպում են իրար, հայր և աղջիկ, միմյանց կարոտի անհավատալի ու անբացատրելի զգացումներով: Հայրը, որն իր ձեռքերում պահած ուներ հագուստների ծրարները, բաց է թողնում դրանք և երկուսով գրկախառնվում են: Երկուսի աչքերից հոսում էին առատ-առատ արցունքներ, որոնք ուրախության արցունքներ էին: Գտել էին իրար, չպիտի տխրեին:

Հարազատների այս հանդիպումը ցնցող էր: Պատկերացնո՞ւմ եք ընտանիքի մյուս անդամների վիճակը, երբ նրանց տրվի այս ուրախ լուրը: Հրաշքի համազոր հանդի-

պում պիտի լինի: Եթե աշխարհը դրվեր մեկ նժարի կողմը և մյուսին այս կարոտի իրողությունը, հավատացեք այս հանդիպումը ավելի ծանր պիտի կշռեր, որովհետև ավելի հարուստ փորձառություն չէր կարող ապրել 59 համարը կրողի աղջիկը;

Այս պատմող տիկնոջ կյանքից շատ տարիներ էին անցել, բայց երբ նա պատմում էր այս փորձառության մասին, նրա աչքերում հավաքված արցունքներում տեսանելի էր իրար խառնված անբացատրելի հուզումը և ուրախությունը:

Այսօր աշխարհում ինչքան ընտանիքներ կան, որոնք հույսով ու հավատով սպասում են իրենց կարոտյալներին: Երանի բոլորը այսպիսի հանկարծակի և հուզումնալից հանդիպումներով ուրախացնեին իրենց սիրելիներին:

ԺԱՅՌԸ

Հիսուս ասում է. *«Ով որ լսում է իմ այս խոսքերը և դրանք չի կատարում, կնմանվի մի հիմար մարդու, որ իր տունը շինեց ավազի վրա. անձրևները թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին և զարկեցին տանը, և նա ընկավ. և նրա կործանումը մեծ եղավ, իսկ նրանք, որոնք իմ խոսքերը լսելով՝ գործադրում են՝ «...կնմանվեն մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա. անձրևները թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին և զարկեցին այդ տանը, բայց չկործանվեց, որովհետև ժայռի վրա էր հաստատված> (Մատթ. 7:24-27):*

Այս պատմությունը դրա վառ վկայությունն է, քանի որ Սուրբ Հայր Անտոն Անապատականը, հակառակ իր սրբակենցաղ կյանքին, դեռ չէր կարողացել հասնել կաշեգործի մակարդակին: Այնպես որ շատ հնարավոր է, որ մի պարզ հավատացյալ մեկը իր մաքուր և արդար կյանքով, օրինակ հանդիսանա նրանց, որոնք ամբողջ կյանքում այդ ճանապարհով են գնացել: Ինչո՞ւ ոչ: Ահա խնդրեմ ձեզ այս պատմությունը:

ԵՐԱՆԵԼԻ ԱՆՏՈՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ

Երանելի Անտոն Անապատականը իր խցում (սենյակում) աղոթելիս, մի ձայն է լսում, որն ասում է. «Անտոնիո՛ս, դու դեռ չես հասել կաշեգործի մակարդակին», որն ապրում է Ալեքսանդրիայում»:

Երանելին լսելով այս մասին, առավոտ շուտ վերցնելով իր ձեռնափայտը դուրս է գալիս ու գնում Ալեքսանդրիա: Երբ հասնում է կաշեգործի մոտ, վերջինս զարմանում է տեսնելով անապատի զարդ Հայր Անտոնին:

Երանելին ասում է կաշեգործին. «Պատմի՛ր ինձ քո հոգևոր սխրանքների մասին, քանի որ դրա համար թողել եմ անապատը և եկել հասել եմ այստեղ»:

Կաշեգործը պատասխանում է. «Չեմ հիշում, որ ես երբևիցե որևէ լավ բան արած լինեմ և այդ պատճառով էլ առավոտյան արթնանալով մինչև գործի գնալս ինքս ինձ ասում եմ. «Այս քաղաքի բոլոր բնակիչները մեծից փոքր կմտնեն Երկնքի Արքայություն իրենց կատարած բարի գործերի համար և միայն ես կմատնվեմ հավիտենական տանջանքների իմ գործած բազում մեղքերի համար»: Եվ այս խոսքերը կրկնում եմ նաև քնելուց առաջ»:

Լսելով այս երանելի Հայր Անտոնն ասում է. «Որդյակ, դու նման ես վարպետ ոսկերիչի, որը տանը նստած կերտում է իր համար Աստծու Արքայությունը: Ես չնայած իմ ամբողջ կյանքը անց եմ կացրել անապատում, սակայն դեռևս ձեռք չեմ բերել այն հոգևոր իմաստությունը և չեմ հասել գիտակցության այն աստիճանին, որ դու արտահայտում ես քո խոսքերում»:

Հարանց Վարք

ՎԱԽԿՈՏ ՍՊԱՆ

«ՈՎ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ ՀԱՄԲԵՐԻ, ՆԱ ՊԻՏԻ ՓՐԿՎԻ» (ՄԱՏԹ. 10:22):

Լավ պիտի հասկանանք ու գիտակցենք, թե կյանքի երջանկությունների աղբյուրը կան նույնիսկ, ինչո՞ւ չէ, բանալին՝ համբերությունն է: *«Ձեզ համբերություն է պետք, որպեսզի Աստծու կամքը կատարելով, հասնեք նրա խոստմանը, քանի որ մի փոքր, շատ փոքր ժամանակ ևս, և գալու է նա, ով պիտի գա և չպիտի ուշանա»,*- ասում է Պողոս Առաքյալը (Եբր. 10:36-37):

Լորդերի պալատից բարձրաստիճան մի անձնավորություն այցելում է Լռակյացների վանքը, ուր վանականների համար բացարձակապես արգիլված էր իրար հետ խոսելը: Լորդը վանքի պարտեզներում վանահոր հետ զբոսնելու միջոցին տեսնում է մի վանականի և անմիջապես ճանաչելով, որ նա նախկին քաջամարտիկ մի սպա էր, վանահորը հարցնում է, թե ինչպե՞ս է պատահել, որ այս քաջարի զինվորականը վանք է եկել ու դարձել վանական; Վանահայր վախենալով, որ Լորդը կարող է հանկարծ ետ պահանջել սպային ու հրահանգել, որ նա գնա իր նախկին պաշտոնին, ասում է, թե այս վանականը շատ վախկոտ մի անձ լինելու պատճառով մտել է վանք և չի ուզում դուրս գալ:

Վանականը, որը այս բոլոր խոսակցությունը լսում էր, ներքնապես զայրանում է և, որովհետև խոսելու իրավունք չուներ, սկսում է ատամները կրճտացնել, մանավանդ, երբ անարգալից խոսքեր է լսում իր մասին: Ինքը, որ քաջարի սպա լինելով բազմաթիվ հաղթանակներ էր ապա-

հովել իր երկրին և հիմա ներկայացվում էր իբրև վախկոտ մի զինվորական, որը վախի հետևանքով մտել է այս վանք ու ապաստան գտել…: Ինքը որ ամբողջ կյանքում չէր զգացել, թե ի՞նչ է վախը, հիմա ներկայացվում էր իբրև վախկո՞տ…: Թերևս իր պատերազմական ամենադժվար պահերին այդքան չէր տառապել նախկին բարձրաստիճան զինվորականը, որքան այդ պահին, երբ իր նախկին վաստակի մասին անարգական արտահայտություններ էին հասնում իր ականջին:

Լորդը, սակայն վստահ լինելով իր տեսած անձի նախկին քաջարի սպա լինելուն, հիանում է նրա լռության ու համբերության վրա և դառնալով վանահորը, ասում է.

«Եթե Քրիստոսի օրենքը ավետարանի ոգով այսքան համբերություն է սովորեցնում մարդուն, ուրեմն այլ տեղ չպետք է փնտրել իդեալ մի կյանք, ո՛չ հարստության, ո՛չ հաճույքի, այլ միայն Քրիստոսի մեջ»:

Այս լսելով Լորդը ներքև է իջնում իր նժույգից և հանելով իր փայլուն համազգեստը, ինքը եւս մտնում է վանք ու դառնում լռակյաց մի վանական, բարոյական մեծ շահ համարելով այդ կյանքը:

ԴԱՌԸ ԲԱԺԱԿԸ

Հիսուսի աղոթքը Ձիթենյաց լեռան վրա Հայր Աստծուն. *«Հա՛յր, եթե կամենում ես, այս բաժակը ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թե իմ կամքը, այլ քո՛նը թող լինի»: «Ինչո՞ւ եք քնել, վե՛ր կացէք, աղոթեցե՛ք, որպեսզի փորձության մեջ չընկնեք»: (Ղուկ. 22:42, 46),* ասաց Հիսուս Իր Առաքյալներին, որոնք քնած էին, մինչ Նա աղոթում էր:

Դարեր շարունակ Հայ ժողովուրդը ու Հայ Եկեղեցին աղոթեցին, որպեսզի այդ դառը բաժակը վերցվի մեր վրայից: Եվ վերջապես Աստված լսեց մեր ձայնը և երկար դարերի լռությունից հետո մեզ պարգևեց Ազատ, Անկախ ու Հավերժական Մայր Հայաստանը: Փառք Աստծու մենք այլևս գերի չենք և ուրիշների լծի տակ էլ չենք,, այլ՝ ՄԵՐ ՏԱՆՆ ԵՆՔ ՈՒ ՄԵՐ ՏԱՆ ՏԵՐՆ ԵՆՔ: Ուրեմն սիրելի հայորդիներ, միշտ և անձանձրույթ աղոթեցե՛ք ՏԱՆՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ:

Այս պատմությունը հետաքրքիր է:

ՎԱՆԱԿԱՆԻ ԱՂՈԹՔԸ

Ժամանակին Լենկթեմուրը նվաճելով Հայաստանը, գերության է վերցնում հարյուր հազարավոր մարդկանց ու նրա մտրակների շառաչի տակ երկարորեն ձգվում է գերյալների շարասյունը հեղեղատների ու բլուրների վրայով, մինչև որ մի առավոտ էլ նրա առաջ փայլատակում է հավիտենապես անթարթ Սևանա լճի պատկերը, կարծես այն լիներ Աստծու աչքը: Եվ արյունարբուն հիացած ու շշմած կանգնեցնում է իր ձին, տեսնելով, որ Այրիվանքի վանականներից մեկը իր առջևից վազելով մտնում է ջուրը ու ոգու նման քայլում նրա ալիքների վրայով: Սկսում է

կանչել նրա ետևից. *«Կանգնի՛ր, մարդ արարած, ետ դարձիր, ես քեզ ոչ մի վատ բան չեմ անի»:* Վանականը վերադառնում է: Լենկթեմուրը իջնում է ձիուց, գլուխ տալիս նրան ու հարցնում. *«Ասա ինձ ո՞վ ես դու, մա՞րդ ես, Աստվա՞ծ, թե՞՝ թռչուն: Սովորեցրու ինձ, որ ես էլ քայլեմ ջրերի վրայով և ինչ որ ցանկանաս կտամ քեզ…»:* Վանականը պատասխանում է.

«Չեմ կարող քեզ սովորեցնել, որովհետև դու թաղված ես մեղքերի մեջ: Բայց եթե ուզում ես այդ մեղքերի համար թողություն ստանալ, իմ ետևից ազատ բաց թող այնքան մարդու, որքան որ կարող են հավաքվել այս եկեղեցում»: Եվ նրան ցույց է տալիս վանքի մատուռը, որը ավաղ շատ փոքր էր գերյալների անվերջանալի հոսքը այնտեղ տեղավորելու համար: Այդ ժամանակ Լենկթեմուրը ժպտալով քթի տակ հրամայում է գերիներին մեկ առ մեկ բաց թողնել դեպի եկեղեցի: Ամբողջ ցերեկն ու գիշերը գերյալները գնում են, սակայն դարձյալ եկեղեցին չի լցվում: Խանը տեսնելով այդ հրաշքը, ավելի ու ավելի է մռայլվում ու գազազում: Վերջում այլևս չի համբերում, ձիով ներխուժում է եկեղեցի, բայց տեսնում է, որ այն դատարկ է: Եկեղեցու առաստաղի կամարների տակ միայն թռչունների թևաբախությունն էր լսվում: Պարզվում է, որ գերյալներից ով ներս էր մտել եկեղեցի, վանականի աղոթքով և Աստծու հրամանով տեղնուտեղը թռչուն էր դարձել և դուրս թռել պատուհանից դեպի ազատություն»:

Լենկթեմուրներ, Չինկիզ-Խաներ, Շահ-Աբասներ եկան, ավերեցին, կոտորեցին, հազարավոր գերիներ տարան, բայց չկարողացան մեռցնել մեր ժողովրդի աղոթքի ոգին: Հայ ժողովուրդը ու Հայ Եկեղեցին միշտ արթուն մնացին, աղոթեցին և ապրեցին:

ԵՐԿՆԱՅԻՆ ՀՐԱՎԵՐԻ ԱՐԺԵՔԸ

Արևմտահայ նշանավոր գրող՝ Գրիգոր Զոհրապը գեղեցիկ, ուսանելի մի պատմվածք ունի, ուր ասում է, թե ինքը *(որ գրագետ լինելու հետ մեկտեղ նաև փաստաբան էր)* մի անգամ իր բարեկամի դատը շահում է, նա էլ որպես շնորհակալություն կամ երախտագիտություն սուրճի մի գավաթ և աման է նվիրում իրեն:

Օրենսգետը (փաստաբանը) ծիծաղում է ու զարմացած ինքն իրեն ասում, թե ո՞վ է այս օրերին սուրճի գավաթ և աման նվիրում ու վերցնելով մի կողմ է գցում դրանք: Իր փոքրիկը մի օր խաղալով կոտրում է բաժակը, մինչ ամանը մնում է նետված տան անկյունում: Փաստաբանի մասնագիտությամբ հնագետ մի բարեկամ գալիս է նրան այցելության: Պատահաբար նկատում է սուրճի ամանը, զննելով այն, հարցնում է, թե ո՞ւր է բաժակը: Օրենսգետը անհոգ ու ժպիտով ասում է, թե փոքրիկը խաղալու ժամանակ կոտրել է այն: *«Ի՞նչ,- զայրացած բացականչում է բարեկամը,- սրանք չափազանց թանկ արժեն և ասում է դրանց արժեքը»* և միայն այն ժամանակ օրենսգետը անդրադառնում է, թե ի՞նչ է կորցրել ու հասկանում է, բայց արդեն ուշ էր…:

Մարդիկ էլ նույն ձևով, ԱՍՏԾՈՒ ՇՆՈՐՀՆԵՐՆ ՈՒ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ կորցնելուց հետո միայն մահվան մահճում են հասկանում դրանց արժեքը, ԵՐԿՆԱՅԻՆ ՀՐԱՎԵՐԻ ԱՐԺԵՔԸ , բայց ավաղ, արդեն ուշ է լինում:

ՄԱՔՈՒՐ ՍԻՐՏ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԵՐԱՆԻ ՆՐԱՆՑ, ՈՐ ՍՐՏՈՎ ՄԱՔՈՒՐ ԵՆ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆՐԱՆՔ ԱՍՏՈՒՆ ՊԻՏԻ ՏԵՄՆԵՆ» (ՄԱՏԹ. 5:8)

Բարի և մաքուր սիրտ ունենալ նշանակում է քրիստոնյային վայել կյանք ունենալ, որովհետև ով չի կատարում մեր Տիրոջ պատվիրանները՝ խնամել հիվանդին, օգնել կարիքավորին, ձեռք մեկնել բանտարկյալին, կնշանակի նա չի ընթանում ճիշտ ճանապարհով և նրա սիրտը չի կարող մաքուր լինել:

Այս պատմությունը հայրենի մեծանուն գրող Ավետիք Իսահակյանի զրույցներից մեկն է, որը կարծում եմ ուսանելի է.

Դարեր առաջ փառատենչ ու դրամասեր մի իշխան էր ապրում Արևելքում: Նա կռվազան էր, անգրագետ, դավադիր, ագահ ու անկուշտ և ուզում էր աշխարհակալ լինել: Մի անգամ նորից հարևան երկրների դեմ պատերազմի է գնում և հաղթականորեն հասնում ամրակուռ մի քաղաքի պարիսպներին, որը պաշարելով վրաններ է խփում նրա շուրջ-բոլորը:

Մի օր իշխանը զբոսանքի է դուրս գալիս քաղաքի շրջակայքը, երբ վերադառնալիս է լինում իր զինվորական վրանները, անցնում է մի գերեզմանատան միջով և հետաքրքրությունից դրդված սկսում է կարդալ շիրմաքարերի արձանագրությունները. «Անուն, ազգանուն, մեծահարուստ վաճառական, ծնվեց այսինչ թվին, մեռավ այնինչին և չապրեց մի օր»: Ի՞նչ տարօրինակ գրություն, զարմանում է իշխանը: Կարդում է մեկ ուրիշը. «Անուն, ազգանուն, հռչակավոր զորապետ, միշտ հաղթական, ծնվեց-մեռավ,

ապրեց միայն մի օր» և ապա՝ «Անուն, ազգանուն, մեծափարթամ կալվածատեր, հողատեր, ծնվեց, մեռավ, ապրեց յոթ տարի»: Նորից՝ «Անուն, ազգանուն, ծնվեց-մեռավ, մարդասպան, ապրեց երեք տարի»: Ի վերջո՝ «Անուն, ազգանուն խորիմաստ հեղինակ, իմաստասեր մարդ, ծնվեց-մեռավ, ապրեց իր կյանքի բոլոր օրերը»:

Իշխանը անկարող լինելով լուծել մահարձանների գրությունները, հրամայում է գտնել-բերել մի տեղացու, որը կարող էր բացատրել այս առեղծվածը: Զինվորները բերում են գերեզմանոցի ծերուկ պահակին և իշխանը հրամայում է մեկնել յուրաքանչյուր գրությունը: Ծերուկը ասում է. *«Հնից սրբագործված ավանդություն ու սովորություն էր մեր մոտ, երբ մի քաղաքացի մեռնում էր, գյուղի ծերունիները հավաքվում էին քննելու համար նրա արժանի և անարժան գործերը: Քաջություն, խելք, հարստություն անարժեք են, երբ չեն օգտագործված, չեն ծառայեցված ուրիշների համար: Իր անձի համար ապրված օրերը նժարի մեջ թեթև են կշռվում, իսկ բարիք գործած օրերը՝ ծանր են և այդ օրերը ապրած օրեր են համարվում»:*

«Ընկերության ու ազգի համար նվիրվողն է, որ իսկապես ապրում է, որովհետև կյանքի իմաստը ուրիշին բարիք անելու մեջ է: Եվ այսպես կյանքում բարիք և ողորմություն արած օրերն են հաշվում ու թիվը գրվում է տապանի վրա: Ահավասիկ այստեղ ննջող իմաստունը հրաժարվեց կյանքի հաճույքներից, խորապես զգաց թըշվառի և կեղեքվածի տանջանքները, նա տառապեց քաղցածի ու կեղեքվածի հետ, մխիթարեց և օգնեց կարքավորին, իսկ հարստահարողին՝ սաստեց: Նրա կյանքի և ո՞չ մեկ օրը իզուր չանցավ: Այս մարդասպան ավազակը կյանքի վերջին երեք տարիներին զղջաց և դրանք անց-

կացրեց ճամբորդներին անվճար սառը ջուր հրամցնելով, ուստի ապրեց երեք տարի: Իսկ այստեղ պառկած զորապետը մի պատերազմում թշնամու մի զինվորի խնամեց ընդամենը մեկ օր: Մի քիչ այն կողմում ննջող մեծահարուստը միայն մի բան արեց. գանձեր դիզեց և հարստություն, կյանքում ոչ մեկին բարություն չարեց և միայն իր մարմնի մասին մտածեց: Եվ իմաստունները գրեցին ... «չապրեց և ոչ մի օր»:

Իշխանը ուշադիր լսում է ծերունու մեկնաբանությունները, առանձնանում, մտածում և ապա նահանջի հրաման արձակելով թողնում-հեռանում է իր երկիրը: Այնտեղ նա սկսում է բարի ու արդար գործեր կատարել, ուրիշների բարութեան համար ապրել և ամեն իրիկուն քնելուց առաջ մտածում էր. *«Ես բախտավոր եմ ու երջանիկ: Հիմա է, որ ես ապրում եմ»:*

Արժի, որ մենք էլ ամեն իրիկուն քնելուց առաջ մտածենք ու մենք մեզ հաշիվ տանք, ապրո՞ւմ ենք իրապես, թե մեռած ենք արդեն:

Բարի մարդ և մաքուր սիրտ ունենալու մի երևույթ է նաև եկեղեցու հանդէպ ունեցած մեր սերն ու նվիրումը, որը մենք չենք կարող կատարել տունը նստած սուրճ խմելով կամ հեռուստացույց դիտելով, այլ՝ Եկեղեցի գալով և մեր մասնակցությունը բերելով: Կարևոր է, որ գանք, որպեսզի մեր Աղոթքի Տունը շեն մնա ու դատարկ և որբ չմնա, ո՛չ միայն Աղոթքի Տունը, այլ նաև մեր հոգին դատարկ ու անսնունդ չմնա:

Ի՞ՆՉ Է ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Բարի լինելու համար մարդու միտքը, սիրտը, հոգին և զգացումները պետք է մաքուր լինեն: Եթե մարդը ներքնապես չար է և արտաքնապես փորձում է բարի երևալ, դա պարզապես կեղծավորություն է: Չինական ժողովրդական մի ասացվածքի համաձայն, աշխարհում երկու տեսակ բարի մարդիկ գոյություն ունեն: Մեկը մեռած մարդն է, որը չարիք չի կարող գործել, քանի որ անշունչ դիակ է դարձել, իսկ մյուսը՝ չծնվածը, որը չի կարող չարիք գործել, քանի որ ծնված չէ:

Բարի հոգին իր ներշնչումը ստանում է Աստծուց, իսկ չարը՝ սատանայից:

Այս պատմությունը կարծում եմ հետաքրքիր է.

Իմաստասերների միջև բուռն վեճի առարկա է դառնում այս հարցը, թե ո՞ր գիտությունն է ճշմարտապես հատկանշում մարդու արժանիքը:

Ոմանք ասում են, թե գեղարվեստն է, ուրիշներ՝ ռազմագիտությունը, իսկ ոմանք էլ՝ քաղաքական փորձառությունը:

Ներկաները իրենց մտածումները հայտնելուց հետո, ուզում են իմանալ Հույն Անտիսթենես փիլիսոփայի կարծիքը, որը մի անկյունում նստած լուռ հետևում էր այս վիճաբանությանը:

«Ինձ համար,- ասում է փիլիսոփան,- լավագույն և բարձրագույն ուսումը և արժեքավոր մարդը նա է, որ կարողանա սովորել մոռանալ գոնե մի չարիք»:

Ուրեմն՝ *«Ի՞նչ է աստվածային կյանքը և ի՞նչ է Աստծու տված ճշմարտությունը»:* Այս հարցը միշտ էլ ամեն մի քրիստոնյա մարդ տալիս է իր կյանքի ընթացքին: Հիսուս տալիս է այս հարցի պատասխանը. *«Ես եմ Ճանապարհը եւ ճշմարտությունը եւ Կեանքը: Եթե ինձ ճանաչեիք, ապա կճանաչեիք և իմ Հորը, այսուհետև կճանաչեք նրան· և տեսել եք նրան» Հովհ. (14:6-7):*

Աշխարհում ամենամեծ պայքարը չարի կողմից մղվում է բարության դեմ, բայց վերջնական ու ամբողջական հաղթանակը բարուն է պատկանում:

Որոշ տեղ հասնելու համար պետք է ընտրես ճանապարհդ, արդյոք գտե՞լ ես այն, եթե այո', ուրեմն առանց վախենալու առաջ պիտի գնաս մինչև ծրագրած տեղդ հասնես: Այդ վայրը ներքին և հոգով ապրած ճշմարտություն է կոչվում, որին գտնելու համար պետք է շարժվես նրա համար սահմանված փշոտ ու արյունոտ ճանապարհով, ինչպես մեր Տերը. անձանձրույթ կերպով աշխատի'ր, ձգտի'ր, փնտրի'ր, բախի'ր, որպեսզի ի վերջո դռները բացվեն, դռնե'ր, որոնք քեզ պիտի տանեն դեպի իսկական և հոգևոր կյանք: Պիղատոսները իրենց շրթներին պատրաստ ունեն այս ծաղրական հարցը. *«Ի՞նչ է ճշմարտությունը»:* Գարեգին Հովսեփյանց Կաթողիկոսը պատկերավոր կերպով տալիս է սրա պատասխանը. *«Նա մարգարիտ է, որ միայն ծովի հատակում կարող ես որոնել ու գտնել, ուրեմն ծովի հատակը սուզվելու ունակության մեջ պիտի վարժվես. Նա թանկագին քար է, ադամանդ, որը հանքերի խորքում կարող ես գտնել, այն էլ հազվագյուտ, երկար որոնումներից հետո» («Դեպի Լույս և Կյանք» Գանձասար մատենաշար, Երևան 1994):*

Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ եղել է և է՝ բարության, արդարության ու ճշմարտության ջատագովը և այն սերմանել մեր ժողովրդի սրտում ու հոգում: Սբ· Գրիգոր Լուսավորչի անմար կանթեղի լույսը այսօր էլ բոցկլտում է ամենուր ցրված մեր զավակների սրտերում՝ հավատ, հույս և զորություն պարգևելով նրանց:

ԿՈՐՑՐԱԾ ԲԱՆԱԼԻՆ

ԱՍՏԾՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹՈՒՆԸ

Մի մարդ գետնին ծռած փողոցի լույսի տակ մի բան է փնտրում: Անցորդներից մեկը տեսնելով հարցնում է.

«Ի՞նչ եք կորցրել»:

«Բանալիս»,- պատասխանում է մարդը:

«Որտե՞ղ կորցրեցիք»,- հետաքրքրվում է անցորդը:

«Տանս մեջ»,- պատասխանում է մարդը:

«Այն ժամանակ, ինչո՞ւ եք այստեղ՝ դրսում փնտրում»,- զարմանում է անցորդը:

«Որովհետև այստեղ ավելի լուսավոր է, քան տանս մեջ»,- ասում է մարդը:

Այ քեզ պատասխան: Իսկ դուք զարմացած չե՞ք:

Ճիշտ այս տարօրինակ մարդու նման պատահում է, որ մենք կորցնում ենք մեր հոգևոր կյանքի բանալին, մեր անձից ներս, իսկ այն որոնում ենք մեզանից դուրս, ուր սխալ մտածումով կարծում ենք ավելի լուսավորված է և հեշտ է մեր կորցրածը այնտեղ գտնել: Իսկ մեր կորցրածը՝ երջանկության բանալին է, այսինքն՝ մեր Տիրոջ հոգևոր ներկայությունը հավատացյալի սրտի մսուրի մեջ: Նրա ներկայությունը անգտանելի է և հավիտենական: Աստված մեզ հետ է, մեր ներսում, մնում է մենք Նրա հետ լինենք:

«…Սերը համբերող է, քաղցրաբարո է, սերը չի նախանձում, չի ամբարտավանանում, չի գոռոզանում, անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտրում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության վրա, ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես հույս է տածում, ամեն բանի համբերում:… Բայց արդ, մնում են հավատ, հույս, սեր, սրանք՝ երեքը· և սրանցից մեծագույնը սերն է» (Կորնթ· Ա· 13:4-7, 13):

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ ՍԵՐԸ

Սովորական մի հոգսաշատ առավոտ էր…ժամը 8:30-ի մոտ էր… 80 տարեկանի մոտ մի ծերունի եկել էր հիվանդանոց, որ ձեռքի մատի կարերը հաներ: Ակնհայտ էր, որ նա շատ էր շտապում ու դողդղացող ձայնով ասաց, որ նա շատ կարևոր գործ ունի ժամը 9-ին:

Ես խնդրեցի նրան նստել՝ իմանալով, որ բոլոր բժիշկները զբաղված են: Երբ նայում էի նրա ձեռքերին, նա ամեն վայրկյան թախծոտ աչքերով նայում էր ժամի վայրկ-յանասլաքին: Ես տեսա, որ դեռ շուտ է կարերը հանելու համար… մյուս բժիշկներից վերցրի համապատասխան դեղանյութերը…իսկ մինչ այդ մենք զրուցում էինք: Ես հարցրի.

«Երևի դուք մեկ այլ բժշկի մոտ եք նշանակված ու դրա համար եք շտապում»:

«Ո՛չ, ո՛չ…ես պետք է հասցնեմ մեկ այլ հիվանդանոց գնալ, որ կերակրեմ իմ հիվանդ կնոջը»:

Ես հարցրեցի ծերունուն ու իմացա, որ իր կինը հիշողության կորուստ ունի:

Խոսելու ընթացքում ես մշակեցի նրա ձեռքն ու վիրակապ դրեցի կրկին: Նայեցի ժամին ու հարցրեցի.

«Կանհանգստանա՞ Ձեր կինը, եթե մի փոքր ուշ գնաք»:

«Իմ կինը ինձ չի հիշում արդեն հինգ տարուց ավել է: Նա անգամ չգիտի, թե ով եմ ես»,- ասաց ծերունին:

«Ու դուք ամեն առավոտ գնում եք նրա մոտ, չնայած նրան, որ նա Ձեզ չի՞ հիշում»...

Նա ժպտաց ու հայրաբար բռնելով ձեռքս՝ ասաց.

«Նա չգիտի, թե ով եմ ես, բայց ես գիտեմ, թե ո՞վ է նա»:

... Ես հազիվ էի զսպում արցունքներս ու փշաքաղվել էի... և մտածում էի. «Հենց սա է այն սերը, որի մասին ես միշտ երազել եմ» …

«Տեր, ո՞վ պիտի ապրի քո վրանում, կամ ո՞վ պիտի բնակվի քո սուրբ լեռան վրա» (Սաղմ.14:1): «Նա ով ան-բասիր է ընթանում, արդար գործ է կատարում, ճշմար-տություն խոսում իր սրտում: Ով չի նենգել իր լեզվով և ընկերոջը վատություն չի արել մերձավորներից նախա-տինք չի ստանում և չարագործն անարգված է նրա աչքում: Այդպիսին փառաբանում է նրանց, ովքեր երկյուղ ունեն Տիրոջից, երդվում է իր բարեկամին և երդումն իր չի դրժում:… Ով անում է այս, նա հավիտյան չի սասանվի» (Սաղմ.14:2-5),- ասվում է Սաղմոսաց գրքում;

Այս պատմությունը դրա վառ ապացույցն է:

ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆ

Պատմությունից հայտնի է, թե 1346-ին, Եդվարդ Գ. թագավորը պատերազմում է Ֆրանսիայի հետ, հաղթում է, սակայն չի կարողանում գրավել Փարիզ մայրաքաղաքը: Մոտավորապես մի տարի պաշարում է այն: Փարիզի քաղաքապետը խելացի մարդ լինելով, տեսնում է, որ արդեն քաղաքի ուտելիքի պաշարը սպառվում է և, եթե պաշարումը երկարի, ժողովուրդը սովամահ պիտի լինի: Ուստի անձամբ ներկայանում է Եդվարդ թագավորին և ուզում է իմանալ հանձնվելու պայմանները:

Եդվարդ թագավորը իր հերթին երկարատև պաշարումից ձանձրացած առաջարկում է հետևյալը. Փարիզի մեծամեծներից վեց մարդ, բոպիկ, գլխաբաց, վզներին լուծ դրած, քաղաքի բանալիները ձեռքներին պիտի ներկայանան թագավորին, հանձնեն դրանք ու հետո պիտի կախվեն:

Քաղաքապետը շատ է նեղվում, սակայն ուրիշ ճար չունենալով գալիս է և վերոհիշյալ պայմանները հաղորդում բանակին ու ասում.

Այդ վեց հոգուց առաջինը ես պիտի լինեմ. կա՞ն արդյոք ուրիշ կամավոր մարդիկ, որոնք ինձ ընկերանալով կուզեն փրկել ամբողջ քաղաքը:

Մի պահ խոր լռություն է տիրում, հետո հինգ գնդապետներ և հազարապետներ ասում են, «Ես էլ, ես էլ» և վեց բարձրաստիճան հոգիներ, բոպիկ, գլխաբաց, վզներին լուծ դրած, Փարիզի բանալիները ձեռքներին ժողովրդի միջից

առաջ գալով, ներկայանում են թագավորին և հանձնում դրանք:

Թագավորը բանալիները վերցնելուց հետո, հրամայում է, որ վճիռը գործադրվի: Մինչև այդ ժամանակ լուռ դիտող թագուհին լսելով այդ վճիռի մասին, անմիջապես նետվում է թագաւորի ոտքերի մոտ ու խնդրում.

«Տեր իմ թագավոր, ների՛ր և խնայի՛ր այս անձնազոհ մարդկանց, եթէ ինձ սիրում ես: Մինչև որ չներես դրանց, այստեղից դուրս չեմ գալու»:

Թագավորը հուզված և անակնկալի եկած աչքերից արցունքները հոսում են և հրամայում է.

«Քեզ եմ շնորհում այս մարդկանց կյանքը: Պարզվում է թագավորը իրապես սիրում էր թագուհուն»:

Եվ արձակելով զորավարներին ասում է. *«Գնացե՛ք խաղաղությամբ և Աստված Ձեզ հետ»:*

ԱՊՐԵԼՈՒ ԴԵՂԸ

Ժամանակներ առաջ մի բռնակալի չհաճոյանալու ու չենթարկվելու համար, մի հայտնի բժշկի բանտ են նետում և տեղավորում միայնակ խցում, ձեռքերին ու ոտքերին շղթաներ հագցնելով: Օրապահիկը մի կտոր չոր հաց և մի բաժակ ջուր: Բայց քանի որ բժիշկը օժտված էր արտակարգ խելքով և խորը հնարամտությամբ, բռնակալը պարտավորեցնում է բանտապետին ուշադիր հետևել բանտարկյալին ու նրա յուրաքանչյուր արարքի մասին իրեն տեղյակ պահել: Երկար ժամանակ ապարդյուն սպասելուց հետո, բռնակալը բանտախուց է ուղարկում իր համհարզին եղելությունը պարզելու նպատակով:

Հանդիպելով բանտարկյալին, համհարզը ապշում է իր առաջ տեսնելով մի առողջ ու կենսուրախ մարդու: Երբ նա սկսում է հարցաքննությունը, զարմանալով լսում է խորը իմաստությամբ լի խոսքեր: Չզսպելով իր հիաց-մունքը, նա հարցնում է. *«Ինչպե՞ս եք կարողացել պահպա-նել ձեր ինքնատիրապետումը այսպիսի անմարդկային պայման-ներում»:*

Բանտարկյալը պատասխանում է. *«Մի՞թե դուք չգի-տեք, որ ես բժիշկ եմ: Եթե ինձ հաջողվել է բուժել ուրիշ-ներին, ապա ինքս ինձ առավել ևս կարող եմ բուժել: Ես հնարել եմ մի դեղ բաղկացած հինգ մասերից և ամեն օր ընդունում եմ այդ հրաշալիքից մի փոքրիկ մասնիկ: Այս-պիսով ես պաշտպանել եմ իմ առողջությունն ու հոգուս ներկայությունը»:* Համհարզը խնդրում է բացել այդ հրա-շալիքի գաղտնիքները, որին բժիշկը պատասխանում է.

Առաջին բաղկացուցիչ մասը, ***դա հավատն է Աստծու նկատմամբ:***

Երկրորդը՝ ***հասկացողություն այն մասին, որ դժբախտություններիս պատճառը իմ մեղքերն են:***

Երրորդը՝ ***գիտակցումը այն բանի, որ Աստված պատժում է ինձ օգնելու նպատակով:***

Չորրորդը՝ ***իմ համոզվածությունն է, որ ինձանից էլ ավելի մեծ դժբախտություններ ունեցողներ կան:***

Եվ վերջապես հինգերորդը՝ ***հաստատ համոզված եմ, որ Աստված ինձ անպայման օգնության կհասնի:***

ՀԻՍՈՒՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ ՎԿԱՅՈՂ ԵՎ ՆՐԱՆ ՄԿՐՏՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ.

«ԱՊԱՇԽԱՐԵՑԵ՛Ք, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՏԵՑԵԼ Է...» (ՄԱՏԹ. 3:2)

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՆԸ

Հետաքրքիր է, թե մենք ինքներս կարող ենք այս հարցին պատասխանել. *«ԱՍՏԾՈՒ ՀԱՄԱՐ Ո՞ՐՆ Է ԱՄԵՆԱԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՆԸ»:* Վստահ եմ, որ ամեն մեկդ էլ ձեր կարծիքը ունեք այս հարցի մասին. ոմանք օրինակի համար կարող են ասել՝ ԶՈՀՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ուրիշներ՝ ՍԵՐԸ, ՀԱՎԱՏՔԸ, ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԵԿԵՂԵՑԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ և այլն:

Հիմա կարդացե՛ք այս պատմությունը և կտեսնեք, թե՝ *«ԱՍՏԾՈՒ ՀԱՄԱՐ Ո՞ՐՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՄԵՆԱԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՆԸ»* ու հուսով եմ Դուք էլ կունենաք Ձեր կարծիքը այս մասին:

Մի օր Աստված հրեշտակին ուղարկում է աշխարհ բերելու ամենաթանկագին բանը: Հրեշտակը շրջում է ամենուր, ուշադիր հետևում ամեն ինչի ու տեսնում է, որ պատերազմ է և ազատամարտիկը, որը կռվում էր հայրենիքը պաշտպանելու և ազատագրելու համար, թշնամու արձակած գնդակից մահացու հարված է ստանում և նրա սրտից արյունը շատրվանի պես դուրս է ցայտում: Տեսնելով ազատամարտիկի այս զոհողությունը իր հայրենիքի համար, հրեշտակը անմիջապես վերցնում է այդ առաջին արյունը ու տանում Աստծուն:

«Բերեցի՞ր»,- հարցնում է Աստված հրեշտակին:

«Այո՛, աշխարհի ամենաթանկագին բանը այս արյունն է, քանի որ ազատամարտիկը իր կյանքը զոհեց եւ հայրենիքի համար իր արյունը թափեց»:

«Ճիշտ ես,- ասում է Աստված,- դա էլ շատ կարևոր է, սակայն ամենաթանկագինը չէ»:

Հրեշտակը գնում է և ուշադիր հետևում աշխարհի անցուդարձին; Տեսնում է հիվանդանոցում մի հիվանդ բժշկի, որը տարիներ շարունակ անձնազոհ կերպով բուժել է հարյուրավոր հիվանդների, ջանք չի խնայել, որպեսզի նրանց փրկի, զանազան վարակիչ հիվանդություններով տառապող հիվանդներին էլ նույնիսկ բուժել է, սակայն դժբախտաբար վերջ ի վերջո դրանցից մեկով նա էլ է վարակվում և այդ պահին մահվան վիճակում է լինում: Հրեշտակը սպասում է ու, երբ բժիշկը իր վերջին շունչն է տալիս, նա վերցնում է այն ու տանում Աստծուն:

Աստված գնահատում է հրեշտակի բերածը, բժշկի անձնազոհությունը, սակայն ասում է, որ դա ամենաթանկագին բանը չի:

Հրեշտակը իջնելով երկիր տեսնում է մի երիտասարդ ոճրագործի, որը ատրճանակը ձեռքին վազքով մոտենում մի փոքրիկ տանը: Հետաքրքրությունից դրդված հետևում է նրան: Երիտասարդը մոտենում է տանը ու նայում պատուհանից: Տեսնում է մայրը իր երեխայի հետ ծունկի եկած աղոթում է: Այդ պահին հանկարծ նա հիշում է իր անցյալը, իր մանկությունը, երբ իր մայրը ճիշտ այս մոր նման իր հետ ծունկի էր գալիս ու սովորեցնում միասին աղոթել: Ու նրա աչքերից զղջման արցունքներ են գալիս: Հրեշտակը անմիջապես վերցնում է այդ արցունքը ու տանում Աստծուն:

«Եկա՞ր»,- հարցնում է Աստված հրեշտակին,

«Բերեցի՞ր»:

«Այո՛, Տեր Աստված, բերեցի մի ոճրագործ, ավազակ երիտասարդի զղջման արցունքը»: Ու պատմում է, թե ոճրագործ երիտասարդը ինչպե՞ս զղջաց ու ապաշխարեց:

Եվ Աստված ընդունում է աշխարհի ամենաթանկագին բանը՝ մի մեղավորի զղջումն ու ապաշխարությունը, քանի որ Նա այնքան բարի է ու լի անսահման սիրով, որ մինչև վերջին րոպեն հնարավորություն է տալիս մեղավոր մարդուն զղջալու, ապաշխարելու ու ներում ստանալու, ինչպես եղավ ոճրագործ երիտասարդի պարագային:

Ուրեմն՝ *«ԱՍՏԾՈՒ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՄԵՂԱՎՈՐ ՄԱՐԴՈՒ ԶՂՋՈՒՄՆ ՈՒ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է»:*

Հովհաննես Մկրտչի խոսքը. *«Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է…Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարության համար, բայց ով գալիս է ինձնից հետո, ինձնից ավելի հզոր է, և ես արժանի չեմ հանելու նրա կոշիկները. Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով…» (Մատթ 3:2, 11):*

ԶԱՆԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում զանգը կիրառվել է 5-րդ դարից: Այսօր էլ այն անբաժան է Հայ Եկեղեցու ծիսակատարություններից: Զանգի գյուտն արվել է Իտալիայի Նոլա քաղաքում: Հայաստանում առաջին անգամ զանգի մասին հիշատակել է Սուրբ Հովհան Մանդակունի իմաստասեր Հայրապետը:

Զանգի ձայնը զարմանալի ազդեցություն ունի մարդու վրա: Տխրության պահին այն թախծալից է, իսկ ուրախության ժամանակ՝ ուրախալի: Եկեղեցական ծիսակարգում զանգ օգտագործելը՝ հիմնականում ընդհանուր աստվածապաշտական արարողությունների ժամանակ հավատացյալ ժողովրդին Եկեղեցի հրավիրելն է: Եկեղեցու զանգերը միաժամանակ հրեշտակների սպասավորության խորհրդանիշն են և նմանողություն ունեն Գաբրիել հրեշտակի փողի հետ, երբ ավետում ու փող են հնչեցնում: Քրիստոսի ծննդյան ժամանակ հրեշտակները *«Փառք ի բարձունս»* էին երգում՝ փառք բարձունքներին և երկրին խաղաղություն:

Այդ ժամանակ հնչող փողերի փոխարեն և նմանությամբ հնչում են զանգերը: Զանգի ձայնն առավել հզոր ու զրնգուն դարձնելու համար անհրաժեշտ է, որ այն կախվի բարձր ու բաց տեղում; Հենց այս նպատակին էլ ծառայում են զանգակատները, որոնք սովորաբար կառուցվում են Եկեղեցու հարևանությամբ կամ Եկեղեցու արևմտյան ճակատին կից, ինչպես Մայր Տաճարում՝ Սուրբ Էջմիածնի Մայրավանքի զանգակատունը կառուցվել է 17-րդ դարում, որտեղ երկար ժամանակ հնչել է Դիբեթյան զանգը: Այսօր Մայր Տաճարում կան չորս լուսարարներ, ովքեր զբաղվում

են զանգահարությամբ: Այն դպիրի աստիճան ունեցողների պարտականությունն է, իսկ դպիրը՝ հոգևոր ամենախոնարհ աստիճանն է:

Սբ, Էջմիածնի Մայր Տաճարում ժամերգությունից կես ժամ առաջ հնչում են առաջին զանգերը, որոնք կոչվում են ԿԱՆՉԻ ԶԱՆԳԵՐ: Վերջիններս լինում են հիսուն զարկ: Կանչի զարկերը խփում են ժամկոչները, ովքեր Եկեղեցում զբաղվում են հավաքարարությամբ և միշտ այնտեղ են լինում: Զանգերը հատուկ օծման ու օրհնության կարգ ունեն Հայ Առաքելական Եկեղեցու *«Մաշտոց»* ծիսամատանում: Վաղ ժամանակներից մինչև ողջ Հայկական Լեռնաշխարհում ամենատևական զանգահարումը կատարվել է 1918 թվականի Սարդարապատի մայիսյան հերոսամարտի ժամանակ՝ յոթ գիշեր ու յոթ ցերեկ ղողանջել են հայկական Եկեղեցիների զանգերը՝ ազդարարելով մահու և կենաց կռիվը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Հողի ու հայրենիքի կարոտը 6

Աղքատների պաշտպան քահանան 8

Ամուր հավատը 11

Անմիտ հարուստը 13

Լույսի ուժը 15

Ճշմարտություն, Բարություն
և Գեղեցկություն 18

Ազատության գինը 22

Տիրոջ երկյուղը կյանքի
աղբյուր է 23

Շնորհների պարգևը 26

Հոգևոր Բժշկին կանչիր 28

Գեղեցիկ պատասխան 30

Մոր սիրտը 31

Մոր սերը 33

Գյուղացիների հարցը 35

Գանձեր հավաքեցեք երկնքում 37

Համբույրներ էի դրել 42

Հարուստի ողորմածությունը 44

Հավատա միայն Քո Տեր Աստծուն 47

Հպարտության մոլությունը 50
Հիմարների հրամանատարը 52
Ինչքան հողի կարիք ունես 54
Հայր Անտոն Անապատական 57
Համբերություն 59
Բարի գործի գնահատանքը 63
Ժամկոչը 67
Քահանայի դասը ամբարշտին 69
Իրապես կարո՞ղ ենք ներել 73
Նմանվեցեք մեծ մարդկանց 75
Ճգնավորը և ուժեղ մարդը 77
Վշտակից դառնալ սգավորին 81
Մի տրտնջա այլ հույս ունեցիր 83
Ժայռը 86
Վախկոտ սպան 88
Դառը բաժակը 90
Երկնային հրավերի արժեքը 92
Մաքուր սիրտ ունենալու մասին 93
Ի՞նչ է ճշմարտությունը 96
Կորցրած բանալին 99
Իրական և անշահախնդիր սերը (Անձնազոհություն) 100
Ապրելու դեղը 104

Ամենաթանկագին բանը 106
Զանգի Խորհուրդը 109
Բովանդակություն 111

ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Արժ· Տ· Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյանը ծնվել է Հոկտեմբերի 7-ին, 1950, Էջմիածին քաղաքում, Հայաստան:

1960-62 թվականներին հաճախել է Էջմիածին քաղաքի Սբ· Աստվածածին եկեղեցին:

1962-ի Սեպտեմբերին ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967-ին ձեռամբ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ· Տ· Հայկազուն Արքեպս· Աբրահամյանի ձեռնադրվել է Սարկավագ:

1968-ին ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն տարվա Հունիս ամսին նշանակվել Կաթողիկոսարանի Քարտուղար:

1974-ի Փետրվարի 16-ին ամուսնացել է Մերի Մանվելյանի հետ:

1974-ի Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռում ձեռնադրվում է ամուսնացյալ Քահանա և 1975-ի Մարտին նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ· Հռիփսիմե վանքում իբրև ծիսակատար, միաժամանակ շարունակելով Կաթողիկոսարանի Քարտուղարի պաշտոնը:

1977-ին Տեր Հոր ընտանիքը բախտավորվում է արու զավակով, որին ի հիշատակ իր վաղամեռիկ եղբոր անվանակոչում են Խաչատուր:

1978-ի Մայիսին իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Տեր Հայրը մի Վարդապետի հետ մասնակցում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմի Հոգևորականաց Համագումարին:

Ամերիկայից վերադարձին շարունակում է իր ծառայությունը Մայր Տաճարում և նույն թվականի Սեպտեմբեր ամսից նշանակվում Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու պատասխանատու, ապա՝ Վանահայր:

1979-1993 թվականներին ծավալել է թե շինարարական և թե հոգևոր լայն գործունեություն, պատշաճ մակարդակի հասցնելով եկեղեցու առաքելությունը: Այդ թվականներին Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հանձնարարությամբ ստեղծում է նախապատրաստական դպրոց բաղկացած 9-14 տարեկան փոքրիկներից ու պատանիներից: Դպրոցի նպատակն էր պատրաստել եկեղեցական արարողություններին որոշ չափով գիտակ պատանիներ Հոգևոր Ճեմարանների համար:

Այդ փոքրիկներից և պատանիներից շատերը այսօր արդեն իսկ ձեռնադրյալ հոգևորականներ են կուսակրոն կամ ամուսնացյալ և ծառայում են Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

1994-ի Դեկտեմբերին Տեր Հայրը ընտանյոք տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և 1995 -ի Հուլիս ամսից մինչև այսօր շարունակում է իր հոգևոր ծառայությունը Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմում՝ զբաղեցնելով զանազան պաշտոններ: